



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7317

0. 26. 5

# ՑԵՂԱՆԵՆԳ ՇԵՅԹԱՆԸ

ԽՈՐՀՐԴԱՄՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Դրեզ' Հ. Ա.



Ս Ս Ֆ Ի Ս .

1027

Տպարան «ՌԱԶՎԻՐԱՑ»

1933

329.14

Հ - 11

329.14

Հ - 11

Ա. ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՇԵՅԹԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԲՆՈՅԹԱԳԻՐԸ, ԱՐԺԷՔՆ ՈՒ ԴԵՐԸ



Մեր կեանքում հին, շատ հին երևոյթ է նա—ցեղանենգ ժերանը: Ժամանակակից ըմբռնումով նա կոչւում է հակադաշնակցական: Անիծտապարտ դարերը յդկեցին նրան, բնեռացրին իբր հոգերանական իւրորոշ տիպ և մզեցին, որ նա անվերջ սողայ մեր կեանքի հետ՝ խայթելով մեզ և խեղկատակելով օտարին: Ժամանակների առաջընթաց հոլովոյթին զուգահեռ՝ նա ըստ ձեր կերպափոխութեանց ենթարկւեց, տարբեր անուններ ստացաւ, ըստ էութեան, սակայն, մնաց միշտ նոյնը — «անցեղ հայութեան» ստորնութեան յաւիտենական գիծը, հակացեղալին չարիքը:

Նա մեր մէջ է յարատեօրէն: Կրառական է, երբ ցեղը հոգեւոր երկունքի կամ ոտզմավառ խոյանքների մէջ է. դառնում է ներգործական, երբ նա պարտում է: Առաջին դէպքում նա թաքնուում է մեր ազգային օրգանիզմում և իբր ներքին մակարոյժ՝ ծծում մեր երակների կենսաւու հիւթը: Երկրորդում՝ ջրօծի—հիղբա—նման բարձրացնում է իր հրիշային զլուխը, լեզու է տանում և խօսքի թունաւոր ոլաքներով ձգառում է ծակոտել մեր սիրալը:

Նա դէմ է մեր ազգային իզէալին, երբ զոր պայքարում ցեղի ճակատագիրն է վճռում:

Նա դասալիք է, երբ Հայաստանում պատերազմ կայ:

Նա լիզում է թշնամու գարշապարը, երբ ոտ գալիս է մեր հպարտանքը, մեր ազատութիւնը ոտնակոխելու:



105769 - ԱՀ

550 - 2009

Նա դաւաճան է, երբ թշնամին հերքին լրտեսի  
պէտք ունի:

Նա քաղաքական կաւատ է, եթէ ցեղավաճառու-  
թեամբ ապրելու կամ դիրքի հասնելու կարելիութիւն է  
տեսնում:

Նա գետնաքարչ սարուկ է, երբ հայրենիքում  
օտարն է իշխում:

Նա զաղրաբան քննադատ է, երբ ցեղի մարտիկները  
պարտած են:

«Խեթիչ եղջիւր» չունի այս թշւառականը (հայոց  
Աստւածը վաղուց է փշրել նրա կայէնական կոտոշները),  
այլ միայն թունաւոր լրձումնք: Խօսքի ցեխն է թափում  
նա բերանից, աղտոտում մեր իրականութիւնը և օտար  
աշխարհի առաջ՝ մեզ դարձնում ամօթահար:

Այն օրից, երբ թուրքն ու բոլցեկիր միանալով  
իրենց ողու ցեխնը փոխեցին մեր կեանքի ճանապարհին  
այդ տիպը դարձաւ ո՞չ միայն կենարոնախոյս, այլև  
ներազային ահսակէտից՝ վճռաշունչ չարագործ:

Նա այն կատուն է, որ թոնիր է մանում, երբ կրակ  
չկայ. խառնում է մեր կեանքի մոխիրը և թշնամուն  
մլաւում՝ «Տեսէ՛ք, հայոց ցեղանութիւնն այլեւս անքեն  
չունի»:

Եւ տակաւին մեր միտքը չարչոկում է դարերի  
առեղծւածը—պիտի հոգեփոխութի՞ այս չէակը, դառնա՞յ  
գրական, սաեղծագործ ուժ, ձուլւի՞ մեր ցեղայնութեան  
բոլում, նւիրւի՞ համահայկականութեան զաղափարա-  
կանին և գործին, միանա՞յ մեզ՝ մեր գոյութեան պայ-  
քարի ճակատն ամբացնելու:

Դաշնակցական ե՞նք — համահայկական և համահա-  
յաստանեան հոգեբանութիւն ունենք, չենք հաշտում մեր  
հայրենիքի քաղաքական մասնատումի և մեր ժողովրդի  
աշխարհազրական ցրւածութեան փաստին, ձգում ենք  
ամբողջական հայութեան եւ ամբողջական Հայաստանին և  
հասկանալի է, որ սոսկում ենք հայութեան հոգեսր  
պառակատումից և երազում ենք ո՞չ միայն «ազգային  
միացեալ ճակատ», այլև համազգային անխովելի ուխտ:  
Ամաչում ենք մեր ժողովրդի ներքին տկարութիւններից.  
Ճգում ենք համացեղային ինքնահզօրացման: Չթաքցը-

նե՞նք. ամբողջական հայրենիքը վերանւաճելու, ցեղի  
որդիները ի մի հաւաքելու, այսինքն՝ ազգային պետութիւն  
սաեղծելու ծրագրի էլ ունենք: Գիտե՞նք նաև՝ որ այդ  
ծրագրի իրացումը պահանջում է ուղղմայեղափո-  
խական նոր շարժում, թերեւս աւելի՝ քան յամառ, դա-  
ժան և երկարատև պայքար. հոգեսր, բարոյական,  
մարմնական և նիւթական ուժերի կենարոնացում և լա-  
րում: Ուզում ենք, որ մեր պայքարի ճակատը լայն  
լինի, շարքերը՝ խիտ, զինւորները՝ տոստ — գիտե՞նք,  
որ քանակն աւելացնում է որպէս արժէքը:

Մեր իրաւունքն է հայ ժողովրդի բոլոր խաւերից  
ուղղմիկներ և սաեղծագործ ուժեր պահանջելը — պա-  
հանջե՞նք, բայց չմոռանանք մի բան. այն, որ հոգե-  
բանորէն հակաղաշնական արակն ո՞չ մի զէպքում և  
ո՞չ մի ձեռվ զրական մասնակցութիւն ցոյց չի տալու  
մեր սպորումներին կամ մարտնչումներին:

Արդէն պատմական անցեալում նա միայն խնայւել  
և պաշտպանւել է ցեղատիպ հայից, բայց երբե՞ք նրան  
գարձել վշտի և սազմի եղբայր: Յիշե՞նք ամենաթարմ  
օրինակներից մէկը: 1919 թւականին, երբ ցեղատիպ  
հայն օրհասական ձիգեր էր թափում քառսից ձեւ տալու  
իր պետական կեանքի կառոյցին՝ Վրաստանն ու Ալբրէյ-  
լանը, ի շարս այլոց, ոկսեցին հետապնդել և պատմել  
նաև հայ համայնավարներին: Վերջիններս դիմեցին  
Հայաստանի համարականական կառավարութեան գթու-  
թեան: Մեր կառավարութիւնը նրանց ո՞չ միայն հիւր-  
ընկալեց երկրի սահմաններում, այլև աշխատանքի և  
ապրելու կարելիութիւն ընձեռեց: Յետոյ (1920 թ. գար-  
նան) պարզեց, որ մեր հացով կշացած և մեր զթու-  
թեամբ փրկւած այս թշւառականները Մոսկուայի  
լրտեսներն էին Հայաստանում — լրտես-գաւաճաններ,  
որոնք աշխատում էին յօգուտ բոլցեկի-թուրք զինակ-  
ցութեան և ի վնաս հայ ժողովրդի: Ահա՛, թէ ի՞նչպէս է  
հատուցանում ցեղանենդ շէյթանը:

Բացի ապէ բախ տութիւն ի ց՝ այդ տիպն ունի  
նաև հոգեբանական այլ զծեր, որոնց չնորհիւ մեր ցեղա-  
յարակ համար՝ գառնում է ի սպառ անարժէք: Իբր օրինակ  
վերցնենք գաղութահայ հակաղաշնական տիպը,

«հոգեբանօրէն հնչակ-ուամկավարը» և ո՞չ թէ մոլորւածը, որ մի օր անխուսափելիքը պիտի զղջայ, պիտի հասկանայ, որ չարաշար կերպով խարւել ու շահագործել է հակացեղային ջրօձից: Զուտ հնչակ-ուամկավար տիպը, այսինքն՝ հոգեբանօրէն հակաղաշնակցականը չի սիրում առեղւածներ, իսկ մեր պայքարի ելքը նրան թւում է առեղծւածային: Նա ապրում է ներկայի կոչտ ֆաստերով, իսկ ներկայի ֆաստերը դասաւորւած են ի վնաս մեզ: Նա նորատենչ էակ չէ և զուրկի է մեր արմենական ուժական և ուժապաշտ խառնւածքից, որով՝ իդէալի մասին հասկացութիւն չունի:

Նա կայապաշտ է և չի ըմբռնում Զիւանիի «Փորձանեց, հալածանց եւ նեղուրիւն ազգերի զլխին՝ կուզգան ու կերպան» իմաստասիրութեան էութիւնը, որով՝ հաւատում է, որ բոլշևիկի և թուրքի տիրապետութիւնն, իրր ռեալ ներկայ, յաւիտենական է: Նա պատմութիւնից գիտէ, որ մենք պարտւած ենք. անծանօթ է մեր ոզու խոռվին և կարծում է, որ ընդմիշտ պարտւած կը մնանք: Նա անծանօթ է նաև մեր ոզու ներողական զծին. մենք նրա վրայ թողնում ենք ըլքայակապ վագրի տպաւորութիւն. նա վախենում է մանել մեր վանդակը, որովհետեւ ինքը չար է, յիշաշար և հաւատացել է, որ զզւելի է զարձել մեզ:

Վերջապէս՝ նո անհաղորդ է հայ ցեղայնութեան. նո մեր ժողովրդի «անցել» մասն է, իսկ անցեղ ժողովաւրդը խուժան է, բարոյական խեղկատակ:

Բարոյական խեղկատակը խաղաղութեան ժամին գոենիկ աեսակի չարագործ է, վատանգի ժամին՝ սնասարսափ (պանիկական) դասալիք:

Զինակցել նրան, երբ մեզ պողպատէ որտով և երկաթէ կամքով զինընկերներ են պէտք. որոնել նրան, երբ մենք վատանգի զուռն ենք բախում:

Նա սոսկում է մեր մածումից, փախչում՝ մեր ուրւականից. զբաղւենք նրանով:

Նրանով զբացւել նշանակում է ո՞չ թէ մեր «մուլուած եղբայրները» զարձի բերելու փորձ անել, այլ արտասահմանում, տակաւին, երկա՛ր ժամանակ կապիկ խաղացնել:

Այդ գիտեն մեր դասի թշնամիները, որոնք մթի մէջ ծափ են առաջին հայկական կապկախաղին. զիտէ նաև ինքը՝ պարող կենդանին, որ ահաճութիւն պատճառով խեղկատակութեամբ՝ ձգառում է ցրել մեր ուշադրութիւնը:

Հասկանա՞նք. արտասահմանում հայերի միջն թիւրիմացութիւն չկայ. չփորձենք զիրար համոզել և ժամանակ կորցնել, եղած կապկախաղը կազմակերպւած մի դաւ է մեր դասի գէմ և աւա՛զ—լաջողւած դաւ:

Առաջին խրամատը, որից մենք արհամարհանքով պիտի անցնենք, հէ՛նց այդ կապկախաղն է: Թողնե՞նք, որ կապիկն ինքնիրեն պարի, մինչեւ որ թուրքն ուրուկիկն էլ ձանձրանալով՝ լքեն նրան:

Ներկայ պայմաններում, երբ ցեղի երկաթեայ խարազանը չի զործում, խօսքով հազիւ թէ կարելի լինի այդ անսամօթ կենդանուն մի բան հասկացնել:

Սխալում են, չարաշար կերպով սխալում բոլոր նրանք, որոնք ենթազրում են, թէ բանավէճը գտնապահակութեան այնպիսի մի մեթոդ է, որ կարող է կապիկից՝ առիւծ, վախկորակից՝ սազմիկ, ազգագութից՝ հայրենասէր, քսուից՝ բարոյական հակայ սաեղծել:

Սխալում են նաև նրանք, որոնք զաղաւթային պայմաններում հաւատում են ազգային ուժերի կենտրոնացման: Ներազգային միութիւնն ո՞չ թէ սոսկ բանտկան պահանջները բաւարարում են կենսաբանօրէն խառնըւածքու (եւ) ի ներքին ուժի լարումով—ինքնապարատումով: Գաղութում մենք չենք կարող մեր ուժը պարտագրել հոգեբանօրէն տիրագաւ ատրբերին, որոնք միայն երկաթեայ խարազանից են ազգւում և երբե՛ք համոզիչ խօսքից, որոնք զուրկի են ներցեղային բարոյականից և վազուց ի վեր իրենց անունը գրել են դժոխքի պատին:

Ներազգային միութիւնը նախատեսում է միացուցիչ բուռնեց: Այս բուռնցքը կարող է լինել բարոյական, եթէ առեալ ժաղովրդի կենտրոնախոյս ատրբերը բարոյական կեիր ունեն. մաւորական՝ եթէ նրանք իրենց սրառու ցեղային մակոյը ի գծեր են կրում. հոգեւոր եթէ նրանք հոգեւոր ոգորումից ի սպառ զուրկ չեն. Եթէ ապական՝ եթէ նրանք սոսկական փերեղակներ չեն.

բաղաբական՝ եթէ նրանք ազգային պետութիւն կառուցանելու տեսչ ունեն: Իսկ ո՞վ չզիմանք, որ մենք զործ ունենք հոգով փերեղակ, մատառումով՝ սարուկ, բարյականով՝ անկշռելիօրէն ընկած, աշխարհահայեցողաւթեամբ՝ իսպառ բոպիկ, քաղաքական դաստիարակութեամբ՝ հիմնավին սնանկ մի խուժանի հետ:

Նա կարող է միայն ֆիզիկական բռունցքով յազմահարեւէլ. իսկ ո՞վ ասաց, որ պատմական առաքելութիւն, քաղաքական համացեղային իդէալ և այնքա՛ն արտաքին թշնամիներ ունեցող մի ժողովրդի կազմակերպւած ուժը կարող է իրաւունք համարել՝ իր եռանդի ահազին մասը վասնել անուղղայ և ամե՛ն դէպքում ցեղօրէն անշահ ներքին հակառակորդի յիմարութեան կոսոյները փշրելու կամ յղկելու ճակատին:

Ամբողջ 10 տարի մենք փորձեցինք հայ բոլշևիկներին վասնզը մատնանշել և ազգայնօրէն ողջախոհ քաղաքական մի ըմբռնում ներշնչել — Հայաստանը մէկ թղաչափով իսկ ընդլայնեց, իսկ համահայկական զանգւածային ներզադթը դարձաւ ցնորք:

Աւելի քան տասը տարի միութիւն քարոզեցինք — արտասահմանում ազգային միութեան զործը մէկ քայլավ առաջ չզնաց:

Արդի՞ւնքը. կորովի աւելորդ սպառում, մտքի ահազին վասնում, որտի մաշում, յուզում, վէճ և պառակտումի խորացում. իսկ ամենասոսկալին՝ յեղափոխական զործունէութեան տկարացում՝ արտաքին ճակատում, քաղաքական կամքի և ուշադրութեան ցրում՝ ներքին ճակատում:

Իսկ չէյթօ՞նը — նա մնաց չէյթան:

Ախտածանաչե՞նք. այդ թշւառազոյն չէակը ունի չչունի բռրստ մի հոգի ունի, որ քանի՛ քերես՝ ա՛յն քան կեռայ:

Խոսուազանւենք, ո՞ր մեր դեղերը չեն աղօւմ, իսկ մեր ձեռքերը չաղատանենք — նա այդքան կարեկցանքի արժանի չէ՛: Թողնե՞նք. որ ինքը քերի սեփական ողուրուր: Ցեղօրէն ոչի՞նչ կը կորցնենք, եթէ նրա եղունդներն իսպառ բթանան:

Զմոռանա՞նք, սակայն զզոյշ լինել: Նա Ս. կարապեակ աւանդական կաղ-դեւը չէ, որ պարտականութիւն է

ստանձնել վանքի փոշինն ու մոխիրը «թափել», այլ մեր կեանքի տնազսրոյն չէյթանը, որ նպատակ է դարձրել մեր վառելանիւթը զողանալ և իր հոգու հետ՝ հայութեան զոյութեան թշնամիներին ծափել:

\* \* \*

Դարեր առաջ Եղիշէն ողբում էր. «կենդանեաւ մերով տեսաֆ զդիակունս անձանց մերոց»:

Ա՛ն, ո՞րքան աւելի խորն է մեր այսօրւայ վիշար: Մենք հայ մարդոց բարոյական դիակներն ենք տեսնում մեր քենամիների ոտի տակ: Զա՞յն ենք տալիս՝ չեն սթափւում, ոգեկոչո՞ւմ ենք՝ ոտքի չեն ելնում, ասո՞ւմ՝ ենք՝ չեն լսում, լսո՞ւմ ենք՝ վայրահաչում են, բարձրացընու՞մ ենք՝ աղմասուգուում են, բռնո՞ւմ ենք՝ փախչում են, թողնո՞ւմ ենք՝ մեզ են կպչում, սիրո՞ւմ ենք՝ զառնում են վանսպական, ատո՞ւմ ենք՝ մեզ անւանում են հաւածամոլ:

Ի՞նչպէս վարւենք, ի՞նչ անենք:

Նրանք քծնում են, թշնամին՝ հրձւում, մենք տառապում: Ի՞նչպէս հաշտել, ի՞նչպէս լեզու զանել, ի՞նչպէս մոռանալ, ի՞նչպէս ներել:

Մեր և նրանց միջև եղած վիճը քաղաքական հայուրուների տարբերութեամբ չի՛ պայմանաւորուում, այլ հոգերանական կառոյցի:

Հակադաշնակցականութիւն — դա քաղաքական ուժ չէ, այլ միայն բարոյական կրաւորականութիւն. դա ժանիք չէ, այլ միայն լեզու. դա կերպարան չէ, այլ միայն շփոթ. դա ձեւ չէ, այլ միայն քառա:

Բարոյական կրաւորականութիւն, լեզու, շփոթ ու քառու. ի՞նչ աներեակակայելի պատիժ:

Յաձա՞խ, շա՞տ յաճախ եմ մտածել այն մասին, թէ ի՞նչ թաքսուն ուժով է յարատեւմ հայկական ցեղանենդ չէյթանականութիւնը: Վերջիվերջոյ նա մարմնահոգերանական մի երեսյթ է, որով՝ չի կարող ներքին սրոց դիմամիզմից զուրկ լինել:

Սուրնութեան դինամիկա — որանով է կնքւում «անցեղ հայութեան» հոգերանականը — որանով է հայ ցեղանենդ չէյթանը պղծում մեր անցեալը, թունաւորում՝ մեր ներկան, մթագնում՝ մեր տպագան:

Հոգեբանորէն հակադաշնակցականը — դու ա՛յն կախարդական մուկն է, որ զեգերում է շղթայակապ վագրի վանդակի չուրջը և իր զսյութիւնն իմաստաւորելու համար ինքատակում. «աղասութիւնն ես երազում — ո՛չտեսանես»»:

Վագրը. — Ո՞վ է կանգնած իմ փրկութեան ձանապարհին: Մուկը. — Մեծն Ռուսաստանը, նոր Թուրքիան և ես՝ հայկական մուկս:

Գէօթէի Մեփիստոֆէլը զանազան կերպարաններ էր ստանում, մեր ցեղանենդ չէյթանն էլ մերթ կապիկ է դառնում, մերթ՝ կատու, մերթ էլ՝ մուկ:

Սրանք են նրա ողու երեք կերպարանափսխութիւնները:

Կայ, սակայն, հիմնական մի տարբերութիւն:

Մեփիստոֆէլը, որ նաև ստեղծագործ ուժ է՝ մի տեղ առում է. —

«Ես մի մասն եմ ա՛յն ուժի, որ մի՛շտ չարն է կամենում և բարին գործում»:

Հայկական ցեղանենդ չէյթանը, սակայն, յանկերպում է. —

«Ես ամբողջութիւնն եմ հայ ակարութեան, որ մի՛շտ չարն է կամենում և ոչինչ գործում»:

Մի ուրախան — ինչո՞ւ այդպէս:

Ցեղանենդ տէլքան — Որովհետեւ իսկական զործի վտանգի ժամանակ, սովորութիւն ունեմ, մտնել մկան ժակ:

\* \* \*

Կարձ մի ողբերգութիւն և կարձ մի զաւեշա, որոնք սակայն, յստակօրէն բնութագրում են հայ ցեղանենդ չէյթանականութեան բարոյականը, ինչպէս նաև պատմական դերը՝ մեր կեանքում:

Հէյ, հնչակեան սակաւաթիւ ազնիւ զոհեր և զուինք՝ հնչակեան 30-ամերայ փառահեղ մարտիկ Հաջի-Նազիկ որ 1921-ի ճակատազրական Ապրիլ 2-ին ինձ հետառապում էիր հայրենիքի աղասութիւնը սուսական անարդ բռնութեան դէմ պաշտպանելու և հետեւեալ առուտօն մորթւեցիր բոլշևիկեան ձեռքով և զուգ հայաստանածին ուամկավար զոհեր և ինք՝ սամկավար

մտաւորական նշան Յակսբետն, որ Ղամարլուի ճակատում աչքիս առաջ ստացար բոլշևիկ մահապիթ զնդակը — դուք ամենքդ բարձրացրէ՛ք աղնիւ նահատակի ձեր լուսապատկ ճակատները և տեսէ՛ք, թէ ի՞նչպէս ձեր խնկելի յիշատակի զողերը ցեղանենդ չէյթանի պատմուճանը հազած, իրենց ողին ձեր գահիների աղտօն ոտքերի ատկ՝ գնում են հակադաշնակցական շնորհանութեան ճանապարհում:

Երջանիկ էիք, թերեւս, որ չապրեցիք և չվայելեցիք գաղութահայ դժոխքը, որում ձեր ողու խորքին անձանոթ, բայց ձեր անունը շահագործող թշւառականները կենդանի աչօք տեսնում են իրենց հոգու դիականալը:

## Բ. ՀԱՅ ՑԵՂԱՆԵՆԴ ՇԷՅԹԱՆԵՐԻ «ԲԱՐՈՅԱԿԱՆԸ», «ՄՏԱՄՈՒՄԸ» ԵՒ «ԳՈՐԾԸ»

Հայ ցեղանենդ չէյթանի կենդանի տիպին առաջին անգամ հանդիպել եմ 1920 թւականի գարնան, Շիրակի չոռում գիւղում։ Մայիսեան ծանօթ գէպքերի օրերն էին։ Ալեքսանդրապոլում զլուխ էր բարձրացրել «հայկական ջրօձականութիւնը». զօրքի մի մասը մոլորւելսվ կոյք զործիք էր զարձել խոսվարար մեծամասնականների ձեռքը։ Արագածի լանջերով զնում էինք Աղէք-Պոլ (այժմ՝ Լենինական) զովելու խոսվարարները։ Մտանք Հոռոմ մեծ գիւղը։ Եկեղեցու բակում հաւաքւած 1000ի չափ մարդիկ լուսում էին մեր ձառերը և խանդավառորէն աղաղակում։ «մա՞ն դաւանեներին. կեցցէ՛ Միացեալ եւ Անկախ Հայաստանը»։ Միախնդի վերջաւորութեանը՝ մի քանի մարդիկ ինդրեցին՝ հաւաքել զիւղի տարէց ու աղեցիքի անձերը և զիւղերը լուսուրանական մի ժողով կազմել։ Գիւղիք անոնայի հիւրասենեակում հաւաքւել էին 50ի չափ տարիքատ մարդէկներ, բոլշևիկ զրանենդները (պրովոկատոր) լուս էին տարածել Շիրակի զիւղերում, թէ Աղէք-Պոլում սկսած պայքարը ուսւահայի և տանկահայի կոիւ է. թէ Գաշնակցութիւնն աշխատ կերպով պաշտպանում է տաճկահայերին, սովորականից և կարիքից աւելի նպաստ է տալիս նրանց և ծրագրել է Շիրակի ուսւահայ զիւ-

ղացիները այլուր փոխադրելով՝ զիւղերը բնակեցնել սասունցիներով։ Հոռոմի զբացի Քաւթառլու զիւղի կաթողիկ բնակիչները, զո՞ւ գնալով զբախօսների սաշրանքներին՝ զէնք էին վերցրել Աղէք-Պոլ գնացող սասունցի հեծելախմբերի դէմ՝ «Բայրենական զիւղը սասունցիական բոնագրաւումից պատվանելու» նպատակով։ Ի՞նչ ողբերգութիւն։ Ինձ վիճակւած էր դառն մի պարտականութիւն — բացատրել ամենասարեցոս, առել է՝ ամենակատածամիտ հոռոմցիներին, մեր համացեղային և համահայասահնեան։ Գաղափարաբանութիւնն ու քաղաքականութիւնը։ Նկարագրեցի հայրենակարօս սառուցու և առնասարակ տաճկահայերի վիշտը. խօսեցի նրանց բուռն տեխնի մասին՝ օր առաջ երկիր վերադառնալու, «մօտ է օրը, երբ մեր բանակը պիտի պատռէ թշնամու շղթան»...։ Քահանան և բարեմիտ ծերունիները հառաջում էին, արտասում։ Գիշերւայ ժամը 2-ն էր. կարծեցի, որ էլ թերահաւաս չմնաց. խօսքս փուկեցի։ Բայց ահա՛, սենեակի աղօտ մի անկիւնից բարձրուցաւ կարճահասակ մի մարդ և առաջ հեռակեալը. —

— «Երիթասահ'րդ, շա՛տ լաւ ես խօսում։ Կոի՛ր իմ պատմութիւնը։ Երկու տարի առաջ (ակնարկում է 1918ը) թուրքը մասւ մեր զիւղը։ Ես ունէի Յ աղայ և մի աղջիկ։ Փոքր աղաս և աղջիկս փախան երեանի կողմերը, աղասուցին և հիմտ վերադարձել են ու օջախու շէնցը։ Գիւղցիները զիւնեն, թէ ի՞նչ եղաւ ամուսնացած 2 աղաներիս և նրանց հարսների ճակատազիրը։ Տղաներս մորթեցին աջքիս առաջ և նրանց հարսները բոնաբարելով մեսցրին՝ դարձեալ աչքիս առաջ։ Հիմտ վերադարձած մի՛կ աղաս ամուսնացած է և ունի սիրունիկ մի հարս, աղջիկս էլ խօս սիրուն է և հասած։ Ուզում եմ, որ թուրքը կրկին գայ, էղ աղէն էլ աչքիս առաջ մորթի, հարսս ու աղջիկս էլ բոնաբարելավ մեսցնի, միայն թէ սասունցին չգայ ու ինձ չասի՛ «բարեւ՛ ինք, աղքեր ջա՛ն»։

Պատմեց և անմիջապէս զուրս եկաւ։

Քահանան և զիւղցիներն աղազակեցին՝ «թո՛ւ քեզ Սաքի, թո՛ւ քեզ Սաքի»։

Իմ պատանեկան երեակայսութիւնը համակւեց սոսկով։ Ցարիներ են անցել, մինչև այսօր չեմ մոսա-

նում այդ զարհուրելի հրէշի կերպարանն ու խօսքը։ Կարծում էի, որ նա մեր ժողովրդի մէջ հիւանդագին մի բացառութիւն է, հայ ցեղանենց չէյթանականութեան եղակի վիժւածքը։

Յետո՞յ. յետոյ լսեցի, որ նոյն 1920 թւականի աշնան, կարսում ուրիշ Սաքիներ մեր զինուորների ականջին շշնջացել են. «ինչո՞ւ էք կուռում. թուրքի հետ մենք եղբայրացել ենք, եկողը մեր եղբայրն է. մի զարկէք»։ Աղեքսանդարպուի անկման օրը հայ բոլցեկիները կազմում են 50-60 հոգինոց մի «թափօր» և յարական հուրրաներով զիմաւորում են Կարա-Բէքիրի։ Զերկարե՛նք բոլցեկի-թուրք զինակցութեամբ պայմանաւորուած սոսկում պատճառող փաստերի մտաին և անցնենք արտասահման։

Սյուակ՝ օր ցերեկով, հակագաչնակցական շնական արգանջի գեղին մի վիժւածքը, —սինէքսը Մարթայեան— իր հողին քում է գեգախքի ցեխին, ումկավար-հնչակ-նէրից «Ոլիսնական»ի տիազան է սահնում և ծաղկեփն-Զերի հետ՝ սրանց «հայկական» սրտի աղբը տանում է Տաճկաստան և դառնում «Ոլիսնական-բէլ»։

Ուր զորս կայ—այնտեղ չի կարող ճահիճ չլինել, ուր վիժուկ կայ—այնտեղ չի կարող հիւանդաս օրգանիզմ կամ վասասերւած արգանդ չլինել։ Մարթայեանը սնեւց, անեց ու քաջալերւեց բուլգարանայ հակագաչնակցական միջավայրում։ Հնչակեան «Փալքանեան Մամուլ» և ումկավար «Փարոս» թերթուկները տօնական հանդիսաւորութեամբ տակեցին նրա զիւաչունչ «յօդւածները», չնայած որ գրանք ո՛չ թէ լրազրական յօդւածի, այլ դաւանանի զօրեղ խառնւածքավ օֆւած մի անձի սեփական ողուցիսի որոժանքի տպաւորութիւնն էին թողնում։

Դիցո՞ւք թէ՝ սկզբնական շրջանում հոգեկոյր ազիտութիւնը մոլորեցրեց այս թերթուկների խմբագիրներին։ Բայց ինչո՞վ բայսարել նրանց լուսութիւնը, երբ թուրքը Մարթայեանին «բէլ»ի, հայերէն՝ «գաւանան»ի պատիւ շնորհեց։ Ինչո՞ւ նրանք չցնցւեցին. գէթ մէկ վայրկեանով չնամակեւեցին զայրոյթով և օրկ. Ամերիկայի ումկավար «Պայքար»ի պէս չյայտարեցին, որ նա «հայ կեանքէն փոխւած» մի սինէքոր

է: Նրանք ո՞չ միայն չցնցւեցին, չզայրացան, չսրբաւ գրեցին իրենց ցեղագաւ սխալը, չմաքրեցին իրենց բարոյական մերքը, այլև շարունակեցին հպարտանալ իրենց աշխատակցի «փառքով», տարփողել նրա յաջողութիւնները՝ Թուրքիայում:

Ի՞նչ է նշանակում սա:

Սա նշանակում է, որ դաւաձան Մարթայեանն իրը հայկական ցեղանենդ չէյթանականութեան ներկայացուցիչ հաւախական տիպ է. այսինքն՝ նա իր հոգեկիցները, համախոհներն ու գարծակիցներն ունի այս զաղութում:

1923 թւականին, Պրագայում, մի խումբ հայեր, բարոյական ակարութեան մի պահուն՝ չնորհաւորական մի հեռագիր են յղում յաղթական Մուստաֆա Քեմալին: Լուրը ոռումքի պէս պայթում է զաշնակցական ուստուզութեան շրջանակներում: Մենք խզում ենք մարդկային ամեն կապ այդ թշւառականների հետ: Անցնում են տարիներ և մի օր էլ նրանց աեսնում ենք բարոյապէս փուած մեր ուաքերի տակ: Մեղայի եկան: Խոսառվանեցին, որ ելոյթն արդիւնք է եղել իրենց միամսութեան և քաղաքական տպիտութեան: Եւ մենք ներեցինք նրանց:

Գաղութում ո՞չ բարոյական հակաշշիռ կայ, ո՞չ բոյկուելու աղնիւ սովորոյթ, ոչ էլ Հոռոմ դիւղի ծերունիների թուրքը՝ Սաքիների երեսին:

Այս պատճառով էլ Մարթայեանները մնում են անպատճ: Թումաձեան էֆէնաբները հակաղաշնակցական սինքորների կողմէից սրակւում են իրը «պատւաւոր ազգայիններ», հնչակ-ռամկավարները լիզում են չէկայի դարձակալ Աղարէկովի մատնանշած դաւաձոն եպիսկոպոսների ներբանը: Ինչո՞ւ Ղեռնդ եպիսկոպոսն այլևս չապացուցանի, թէ կարելի է Յիսուսի խաչը կրել կրծքին և սրտում աղօթել սատանային: Ա՛ն, ի՞նչ զարհուրելի շփոթ: Բողոքական պատելիների «Հայաստանի Կոչնակ» թերթը հանդիսանում է լուսաւորչական եկեղեցու և կաթողիկոսական բարձր իրաւունքների պաշտպանութեան ախոյեանը: Եղիպատոսի սամկավար օրգան «Արև»ը քարոզում է «ազգային միացեալ ճակատ» և պնդում է, որ գաշնակցութիւնը դաւում է ո՞չ միայն Թուրքիոյ և խորհրդային Թուսիոյ, այլև Սուրբոյ դէմ (յիշել Ա. Նիկոլի

գրքոյկի պատմութիւնը): Բարեգործականը նուպարաշէն է կառուցանում գաշնակցականների ստեղծած «Արարատեան հանրապետութեան» սահմաններում և մարտնչում է գաշնակցութեան դէմ, որ շարունակում է հետապնդել ո՞չ միայն Ահարոնեանի, այլև իր իսկ՝ Պօղոս նուպարի երազած մեծ Հայաստանի իդէալի իրականացումը: Հակառակնակցական մամուլի ամենաականաւոր օրգան «Պայքար»ը, որ երբեմն հայրենասիրական պոռթկումներ է ունենում, նմանում է մի զորափ, որ նեղւելով ճահիճից՝ մերթընդմերթ սասուատում է ցամաքի վրայ. կոկում է մի երգ, յեայ փախում է իր հոգու ճահիճը, թրջում իր քարոզած զաղափարը և սպառած ու չնչահեղձ՝ կրկին զորւում դէպի ճահիճը:

Հակառակնակցականութիւն. եղկելի շփոթ, զարշահոտ ճահիճ, թքելի զաղափար, թուրք-բողշեկիեկան զաղրելի ոգուց ցանւած մուր, հոգեոր խաւար:

Ի՞նչ պատիժ է սա, աստւած իմ: Ու՞ր էք գնում եղկելի Յուրաքաներ:

\* \*

Դժւար է ձշպէլ, թէ որո՞նք են գաղութահայ կեանքի այսօրւայ իսկական ցեղանենդ չէյթանները: Հաւանաբար, սրանք հրապարակում չերեացող լրտես-մատնիչներ են, սրանք սակայն, կարողացել են հնչակ-ռամկավար հոսանքների կեանքի լծակն իրենց ձեռքն առնել:

Այդ հոսանքների բերանը հանդիսացող մահպղթերթը տարիներից ի վեր լծւած են ապերախտ մի աշխատանքի:

Նրանց «քաղաքական դաւանանք»ը խտանում է հետեւել կէտերում.—

ա) Անձնական խծրծտնք:

բ) Լրտեսամիտ զրաբանութիւն:

գ) Պայքար Մայիս 28-ի գաղափարականի և հայոց պատճութիւնը խորհրդանշող եռագոյնի դէմ:

դ) Երեսանի վերածնութեան տարփողում և ներդադրի շահագործում:

ե) Սեացում Դաշնակցութեան «արկածախնդրական» անցեալի:

դ) Պայքար Միացեալ և Անկախ Հայաստանի «Երազ»ի գէմ:

է) Պայքար «ոռւսահայ» զործիչների և «ոռւսահայ» էռութեան գէմ:

Այս ամբողջ տախտակը զծւած ու պատրաստած է թուրք-մեծամասնական ձեռքով: Նա քաղաքական մի ծրագիր է, անշուշտ: Ինչո՞վ լսացարել, որ նա դարձել է հնչակ-ուամկավարների ներշնչարանը: Այդ կը պարզէ, եթէ մենք այդ նպավեալ տախտակի կէտերը քննութեան կառնենք:

\*\*

ա) Անձնական խճբանի. — Բոլշևիկը բարոյական անասուն է: Այսակեղ նրա՝ իբր հոգեբանական տիպի՝ տուաելութիւնների և թերութիւնների գումարը: Սպիհոս է նա, չի ճանաչում բարոյական օրէնք և կարևորութիւն է տալիս եղելոյթների զործնական ելքին: Ճշմարիս-սուա, ճիշդ-սխալ, արդար-անիբառ, բարոյական-անրարոյական — նման ըմբռնումների բեկուսցումից զերծ է բոլշևիկը: Բոլշևիզմ — դա մի ձիգ է ազատազրւելու քրիստոնէական «Երկու ոգիների». ներքին պայքարից, բարու և չարի հակամարտութիւնից, կարձ իմացական և բարոյական տառապանքից: Դրա համար էլ նա գնահատում է ո՛չ թէ խորհրդածող հանձարը, այլ զործնական տաղանաք, զործում է ո՛չ թէ ըստ բարոյական զգացման, այլ ըստ առարկայական շահի: Այս հոգեդով է պայմանուրում բոլշևիկեան քաղաքական և բարոյական մաքիավելիզմը:

Հնչակ-ուամկավարները հոգեբանօրէն բոլշևիկներ չեն: Նրանց հոգեկառայցի հիմնական զծերը կազմում են, հայկական ստրկամառութիւնը և ներքին ակարսութեան ինտուիտը զգացումը: Նրանց ապրում-մտածումը շաղխւած է հին, նեխած նախապաշարումների ցեխով: Լայն ճամբանների էտակ է հակագաշնակցական հայը, իսկ յայտնի է, որ գոռսքի ճամբանները լայն են: Կեանքի քամբիները նրա ներքին տկար էռութիւնը քշում են մի գծով — նա մղում է մի ուղղութեամբ և բեկուանում մի կէտում:

Բարոյական կեանքը նախասեսում է ներքին մղում.

Հնչակ-ուամկավարները զուրկ են նման մղումից: Նրանք քշում են արտաքին ուժից, կեանքի քամուց և կանգնում են այնակեղ, ուր սրանք են պարտապահութեան պահապահը:

Այդ ուժն ու քոմին գալիս են բոլշևիկ-թուրքական ազգիներից, որով՝ հնչակ-ուամկավարների շարժուձեւերը մեր դէմ կրում են բարոյական անազուած մարդոց ընդվրգ-ման նկարագիր: Բարոյակէս անազատը չի բեւեռանում իբր բարոյական անասուն, այլ բեւեռացւում է իբր բարոյական հրէչ: Ըստ այսմ՝ հնչակ-ուամկավարները, եթէ զիտակցում են իբրենց արարքի իմաստը, ցեղանենք շարագործներ են. եթէ չեն զիտակցում՝ կոյր զործիներ են:

Թէ՛ ինքնազիտակ չարազարծը, թէ կոյր զործիքը բարոյակէս անազատ են, որովհետեւ իմացապէս ազէտ են. և իմացապէս ազէտ են, որովհետեւ բարոյակէս ազատ չեն: Մարդկային ճշմարիտ զիտութիւնը յենուում է բարոյական ազատութեան սկզբանքին: Այս ճշմարատիւնը չեն հասկանում միայն բռնակաները և ստրուկները, որոնք թէ՛ յաջողութեան թէ՛ ձախողանքի մէջ՝ զուրկ են մնում որտի մեակոյրից:

Հոգով ստրուկը և խառնւածքով զոեհիկը — ճշմարիտ ազէտը — իբր հասարակական էտակ ցուցազրում է երկու զիծ: —

1. Ընդհանրական նշանակութիւն ունեցող երևոյթների և զաղափարների անձնականացում՝ իբր մտածման բովանդակութիւն:

2. Հայոյանքն՝ իբր դաստիարակութեան և խեղկատակութիւնն՝ իբր զործունէութեան մեթոդ:

Մեր ընկերները զղայնանում են, որ հնչակ-ուամկավար «Պալքանեան Մամուլ» և «Փարոս» թերթերի բովանդակութիւնն ու մեթոդ ծառայում են այդ զծին. օրինակ, թութակելով բոլշևիկներին՝ այդ թերթուկները հայ յեղափոխական լայնածաւալ, երկարատեւ ու սրտաճմլիկ շարժումը համարում են մի քանի անձերի զործ և ձգում են իբր թէ վարկաբերել այդ անձերից ումանց: Պէտք չէ՛ զղայնանալ, այլ միայն հասկանալ:

Մեր ընկերներին այդ թերթերի բովանդակութիւնն և մեթոդի սնանկութիւնը բացատրելու համար՝ տա՛նք մի քանի օրինակներում:



550 - 2009

1) Մեր ցեղի յաւիտենականութեան դուռը բախսո Ահարոնեանը, որի ստեղծագործութիւնը քանակով գերակում է բոլոր հնչակ-ուամկամվար զրիչների արտադրանքը և որակով մնում է անհաշւելիօրէն բարձր «Փարոս» թերթում «անարգում է» մի խեղճ աղայից ինչու, որովհետեւ Երեանում սոսկում են Ահարոնեան ոգու ուրուականից, ամեն օր բոլշևիկներն իրենց ազաւի կառացը թաթախում են ցեխի մէջ, աղտօտում իրեն թերթերը... և կարծում են, որ Ահարոնեանը յաղթահարւեց: Զօպանեանը Երեանին հաճոյանալու համար իւրացնում է այս սովորութիւնը և անմեղ աղաներ հետեւում են նրան: Ո՞վ է մեղաւորը, Երեանը, Զօպանեանը, Ֆիլիպէի աղան — ո՞չ, մեր ճակատագիրը:

Զգտել այդ ճակատագրի յեղափոխումին — նշանակում է ո՞չ միայն զգւել Երեանի յիմարութիւններից և Զօպանեանի խորչամած ողուց, այլև կարեկցել ֆիլիպէցի աղային: Նա մեր ճակատագրի զոհն է, դառն ճակատագիր, որ զրկել է նրան Ահարոնեանը կարդալու և հայ ցեղայնութեամբ հաղորդւելու կարելիութիւնից:

2) «Պալքանեան Մամուլ» և «Փարոս» թերթուկները, որոնք զաղութանայ տկարութեանց ճիւաղացման ճշմարիտվայրեր են՝ այս սպամական կրոսվի ներկայացուցիչներց Գ. Նժդեհի այսօր սեացնելու համար՝ կացահարում են նրա հերոսական անցիւալը չակերտելով զօրավար և սպարապետ բարերը: Զօրավարութիւնը աստիճան է, սպարապետութիւնը՝ պաշտօն: Պատմականորէն նշանակալից մի վայրկեանում, հերոսական Սիւնիքի Խորհուրդը, կառավարութիւնը և զինւորականութիւնը Գ. Նժդեհին տալիս են զօրավարի աստիճան և սպարապետի պաշտօն: Նժդեհը Այսօր էլ զօրավար է, որովհետեւ ասինանը մընայուն է: Սակայն, այլև նա սպարապետ չէ, որովհետեւ այդ պատօնը հիմա չի վարում: Այն օրը, սակայն, երբ այդ ականուոր յեղափոխական-զինւորականի ուրուականից սարսափով փախչում էին թաթար և օսմանցի թուրք հարդաները, բոլշևիկեան «կարմրադրօշ» զօրամասերը, որոնք բոլորը Զանգեզուրում դառնում էին նապաստակ—Նժդեհը ո՞չ միայն զօրավար էր, այլև սպարապետ: Նժդեհի ղեկավարած Զանգեզուրը երկինք բարձրացրեց թա-

թարական 200 գիւղերի ծուխը, գլխովին ջարդեց ոռուական 11-րդ բանակի զօրամասերը, Նուրի փաշայի «ասկեարները» և պարտազրեց իր կամքը — դառնալ Հայաստանի անբաժան մասը: Կացահարելով Նժդեհի մեծ կռւսակցութեան փառքի ծիրանին՝ ճակադաշնակցականները մատնում են ո՞չ միայն իրենց հայրենանենգ ողին և աղիտութիւնը՝ պատմական անցքերի մասին, այլև իրենց թզուկային նախանձը — կատուի նախանձը՝ առիւծի հանդէպ: Ճակադաշնակցականը, սակայն, մի կատու է, որ չի կարող մուկ իսկ բռնել, նա չի ըմբռնում, թէ ի՞նչ է նշանակում բարարական 200 գիւղերի կործանումը, ոռուական 11-րդ բանակի պարտութիւնը, Նուրի փաշայի ասկեարների զարդը եւ Զանգեզուրի կցումը Հայաստանին, Կատուից բանականութիւնը ենք սպասում, պատմագիտական ըմբռնում:

Կատուզի այդ մարդիկ այս բարորից ոչինչ են հասկանում, որովհետև մեր ողբերգական հայրենապաշտութեան փոխարէն՝ նրանք համակւած են ցեղուրացի մանրագրծ քսութեամբ: Ճակադաշնակցականը զուրկ է ո՞չ միայն զօրավարներ, այլև հասարակ զինւորներ ունենալու փառքից: Անծիր խաւարն է իշխում նրա սպասում և նա բնազդաբար ստերներ է փնտուում մեր պատմութեան լուսաւոր էջերում: Հայ զօրավարներ, հայկական բանակ, Սիւնեաց հերոսամարտ, թուրք-թաթար-բոլշևիկ զինակցութեան զիջում, թշնամու պարտութիւն, Գաշնակցութեան ճիգերով ստեղծւած հայրենիք: Ա՛հ, անտանելի, աներեակայելի է այդ բոլորը նրանց համար, որոնք մեր ցեղի մէջ միայն նսեմականն են տեսնում, որոնք սոսկում են նոր ցեղաշարժի հաւանականութիւնից, հայկական նոր բանակի, զանակցական նոր զօրավարների, ընդլայնւած ազատ և մեծ Հայաստանի պատկերից:

Ի՞նչ անել, որ այդ բոլորը այլևս չգան — հաւատարմութիւն մլաւել մեծ Հայաստանի գաղափարի թշնամիներին, սեացնել նրա զաղափարակիրների անցիւլը, ծաղրել հայ ցեղի մարտական փառքը:

Տկարի խեղկատումը, նրա ծաղրանքը — ի՞նչն է աշխարհում աւելի զգւելի քան՝ սա, որքան էլ՝ նա սպածածային մի պատուհաս է:

Ի՞նչ էլ լինի — այս աշխարհի արարիչը անկատար մի էտի է: Հակադրասէր ողի ունի նա, անզամ՝ ստատունային իրաւունք է ուել ծաղրելու իր իսկ գործը:

Ի՞նչու հնչակ-ռամկավարն իրաւունք չունենան ծաղրելու մեր հերոսականը. երբ աշխարհում յիմարութիւնն աւելի՛ է աժան, քան խոհականութիւնը երբ քամի փչելն աւելի՛ է դիւրին, քան հերոսականի ողբերգութիւնն ապրելը. երբ խեղկատակօրէն կացահարելն աւելի՛ նպատակայարմար է, քան տառապելով քննադատելը. երբ կատօրէն ցակառելն աւելի՛ շահաբեր է, քան առիւծօրէն վատնղների հետ խաղալը. երբ ունայնաբանելն աւելի՛ հաճելի է, քան ծանրօրէն մտածելը:

Գէօթէն ասում է. «զու նման ես ա'յն ողուն, ուրին՝ ըմբռնում ես»:

Կատուն՝ կատու է և յաւիտենօրէն նման՝ իր սպատկերին:

Նա չանգում է մեր պատմութեան մազաղաթը և չի հասկանում հայ յեղափոխութեան ողբերգական հերոսականի իմաստը:

Ի՞նչ անենք. ողբա՞նք, թէ՞ ծիծաղենք:  
Կարծում եմ՝ ծիծաղենք:

Յ) «Ավլորը Քարոզիչ» — ամբողջ մի իմաստութիւն կայ այս բառերի մէջ: Քարոզիչ ավլորը սիմբոլն է ողիստութեան և ամարտաւանութեան: Այսո՛, կեանքում չա'տ խայտառակութիւններ կը պատահեն, եթէ ավլորն է իմաստութեան և ձմարտութեան քարոզիչը: Հայ կեանքի յետամնացութեան և հայ իրականութեան խայտառակութիւնների հիմնական պատճառներից մէկն էլ ա'յն է, որ զայութիւն չունի իմացական և բարոյական վերահսկողութիւն: Ամե՛ն իմաստակ, որ զրիչ է շարժում—կարող է «խմբագիր» դառնալ. հոգեոր ամե՛ն թշւառական, որ լաւ հայհոյել գիտէ — արդէն լաւ «խմբագիր»է. ամե՛ն հայհոյաբան, որ ընթերցող է գտնում — կարծում է որ, ինքը բարձր մտաւորական է; Ամե՛ն տգէտ, որ օգտագործելով թայֆայական հակամարտութիւններ՝ պարոց է մտնում — կարծում է որ, ինքը որակեալ ուսուցիչ է: Այս

պայմաններում գժւար է չարն ու բարին միմեանցից զանազանեւ:

Սոֆիայում կայ հայկական աղքատիկ մի նախակըրթարան, որում՝ իբր վարժապետ ծառայում է մի թերուս, որ կոչւում է Յ. Պողոսեան:

Սոֆիայում մարդկային ոգու ամենամութ անկիւններից խաւարավիժում է հնչակեան մի շաբաթաթերթուկ, որի խմբագիրը նոյն վարժապետն է:

Այս «վարժապետ-խմբագիր»ը նշանաւոր է նրանով, որ իր հոգեմարմնական կազմով նմանում է փոքրիկ, դատարկ մի տակառի, որ քշւելով բոլշեկեան քամուց՝ զորուալմ է «հնչակեան գաղափարական պատճե» տիտղոսով ծանօթ փոշոտ ձամբին և երբ քարի է բախւում՝ հանում է աղեխարչ մի աղմուկ: Մեր հնչակեան հայրենակիցներն այս յիմարական աղմուկն ընդունում են իբր իրենց մշտարթուն աքլորի կանչը: Այս աքլորի համար չկայ հայ պետական-հասարակական գործիչ Սիմոն Վրացեան, այլ կայ ոմն «թզուկ Սիմոնիկ»:

Մարմնով՝ Սիմոն Վրացեանը պատկանում է «քարձահասակներ»ի կարգին, նրան «թզուկ» անւանող Յ. Պողոսեանը «կարճահասակներ»ի, աւելի՛ ձիշզը՝ նսեմահասաների: Երեսուն տարւայ հասարակական գործիչ, Հ. Յ. Դ. Բիւրօի անդամ, Ազգային Բիւրօի անդամ, անդրկովկասեան Սեյմի և Հայտատանի պարլամենտի անդամ, զիւղատնտեսական նախարար, Հայաստանի վարչապետ, Թիֆլիսի «Հորիզոն» և Երևանի «Յառաջ» հսկայածաւալ և համահայկական նշանակութիւն ունեցող օրաթերթերի խմբագիր, համահայկական արթէք ունեցող հսկայանատոր երկերի հեղինակ և այլն, և այլն և այլն Սիմոն Վրացեանի անունը ծանօթ է աշխարհի բոլոր հայերին, Անդրկովկասի վրացի, ոռւս, թաթար զանգվածներին, եւրոպական և համառուսական պետական և հաստրակական գործիչներին — առնւազն միլիոնացի մարդուն այս էլ իբր ոչնչաբան, ունայնագործ և խառնակիչ ծանօթ է Բուլգարիսյ հայ համայնքին — առառաւելն մի քանի հազար մարդոց:

Եւ այնուամենայնիւ Սիմոն Վրացեանը «թզուկ» է:

Ակամայից յիշում եմ գերմանական մի հանդիսում  
մի քանի տարի առաջ տեսածո մի պատկերը:

Ովկիանոսի վրայ ընթանում է բրիտանական անոն-  
լի մի զրահանաւ (անգլիական ծովային ուժի սիմբոլը).  
Նրա ցուռկից կախւած է մի տակառ (ռուսական ծովային  
ուժի սիմբոլը): Տակառն աղելաբարձրէն երերում է զրա-  
հանաւի յարուցած ալիքների վրայ: Տակառի մէջ նստած  
են մի քանի սուս-բոլեկիկ մարդիկ: Վերահաս խորտա-  
կումի սոսկումը աչքերի մէջ՝ նրանք մէկ ձեռքով բռնել  
են տակառի եղբերը, միւսով՝ մի մուրճ և մանգաղ. բա-  
ցել են երախաները և բղաւում են զրահանաւին. «թը-  
զո՛ւկ, մենք կը խորտակենք քեզ»: Վերեից նայում են  
անգլիական նաւազները և ծիծաղսւմ:

Իսկ մենք ի՞նչ անենք, երբ Յարութիւն Պօղոսեանը  
նստած հնչակեան տակառում՝ նայում է Դաշնակցութեան  
զրահանաւին և ասում. «Սիմոնի՛կ, թզո՛ւկ, քեզ կը  
խորտակեմ»:

Զգայնանա՞նք, թէ՞ ծիծաղենք:

Կարծում եմ՝ ծիծաղե՞նք:

4) Ծուռ խղճմատանքն ու բարոյական տկարութիւնն  
ազգում են ենթակայի «առարկալական տեսաւորութեան»  
վրայ: Բարոյալէս անսղնայար էակը իմացական պատե-  
հապաշտ է: Այդպիսին զուրկ է փառութիրը փաստ ըմբռ-  
նելու ընդունութիւնից: Նա ա՛յն փերեզակն է, որ  
սովորութիւն չունի իր կշիռքի նժարը հաւասարութեան  
կէտին պահել: Իր փչացած ապրանքը վաճառելիս՝ նա  
սպառում է երգումների շարքը և ծախելուց յիշոյ, մե-  
նախօսում. «աս ալ կլլեցուցինե»:

Ո՞րքան հեռու է արեն երկնակենարոնից — ա՛յնքան  
երկար է լինում մարմինների ստւերը:

Ո՞րքան խորթ է մարդս ձմարիտ գիտութեան —  
ա՛յնքան անձոռնի է նրա լեզւի սնախօսութիւնը:

Տզիտութեան պոչը մի՛շտ էլ երկար է:

Երկար լեզւապոչով են «քաղաքաբանում» հնչակ-  
ռամկավարները: Իսկ ի՞նչ է նրանց քաղաքաբանութեան  
հիմքը — անմիտ շաղակառատութիւն, քծնանք՝ ցեղի թըշ-  
նամիների առաջ. մեծամեծ տիտղոսների շաղալանք՝ ի-  
րենց ոչնչութիւններին և ուրացում՝ հակառակորդի իրա-  
կան արժէքների:

Ո՞րքան փոքր է մարդու սպին — ա՛յնքան մեծ է  
երկում ինքն՝ իր աչքում:

Ո՞րքան փոքր է մարդու սպին — ա՛յնքան աննշան  
է երկում դիմացինն՝ իր աչքում:

Ո՞րքան սորկամիտ է մարդս — ա՛յնքան ահարկու է  
երկում «իշխանաւոր»ը՝ նրա աչքում:

Ճնճղուկի աչքին ագուաւը թւում է ահարկու մի  
հսկայ: Մկան կարծիքով չկա՛յաւելի զարնուրելի զազան,  
քան՝ կատուն: Ճնճղուկը, սակայն, չի պատկառում առիւ-  
ծից, մուկը զաղափար չունի վազրի ահարկութեան մասին:

Կաթուղիկոսական «ընտրութեան» առիթով Հայա-  
տան զնացող և Զորագէսի հանգէսն «ըմբռշխնող» Զօպանեա-  
նի աչքին՝ զժուծամարմին Աղապի Խանձեանը թւացել է  
«յաղթանդամ զինուրականի պէս» մի հսկայ:

Ահարոնեանի հանձարը հայհոյող ճնճղուկամիտ յի-  
մարները հնչամ-ուամկավար թերթերում որակւում են՝ իրը  
«Պրչի մշակներ»:

Դաշնակցական հսկայ մամուլի օրգանները, մեր ամսագլը-  
րերը և ամեն տարի լոյս տեսնող բազմաթիւ զրբերը  
«թզուկային» աշխատանքի «թզուկ»-պատղներ են:

Տեսնու՞մ էք ծուռ խղճմատանքն ի՞նչպէս է յիմարա-  
ցնում մարդուն:

Դաշնակցական մամուլի օրգանները (ի՞նչպէս «Յու-  
նապեր»ը), ամսագլերը (ի՞նչպէս «Հայրենիք» ամսագլուր)  
թզուկային թերթուկներ են, որովհետև հսկայածաւալ  
են: Դաշնակցականները «Պրչի մշակներ» չեն, որովհետև  
ամեն տարի բազմաթիւ զրբեր են հրատարակում: Որով՝  
հնչամ-ուամկավարները «Պրչի մշակներ» են և «սաեղծա-  
գործներ», որովհետև լուրջ թերթ, ամսագլի հրատարակել  
և զիրք զրբել չզիտեն:

Գիր՞ք — դա ոչինչ բան է: Ծաւալով մեծ և բո-  
վանդակութեամբ խոր ամսագլի՞ր, օրաթե՞րթ — գրանք  
թերթուկներ են, «քաղմէջ» են, «քառէջ» են:

Թո՞ղ այլպէս լինի:

Ակամայից յիշում եմ մի դէպք: Խռոսական «Սահմա-  
նակիր Ժողով»ի ընտրութեան օրերին (1917 թ. աշնան),  
Աքարանի շրջանի Ալիքուչակ գիւղում, Մացակ անունով

ամբարտաւան մի զեղջուկ հանդիպեց ինձ և անմիջապէս հարց աւեց.

— ի՞նչպէս են արեխներս:

— և արեխներն են լաւ, թէ քաղաքացիների կօշիկները:

— Քո՞ արեխները:

— Իմ արեխներն ամբողջ Երևան քաղաքի հետ չե՞մ փոխում:

— Մի՞ փոխիր, սիրելի՞ս, մի՞ փոխիր:

Իր հութեան հոգեսոր ազբը դրսեսորող այս յիմարութիւնը Մացակը փորձեց ներկայացնել իբր գւարճացուցիչ խեղկատակութիւն, իբր անմեղ սրամտութիւն: Զագացի, որ նա ծուռ խղճմանքով մի մարդ է: Իր դիմագծութիւնն արդէն վկայում էր, որ նա վաս տեսակի մի կասկածամիտ է: Ուզեցի, որ շարունակի բացւել ինքը, սակայն, լուեց: Խօսք առին զիւղացիները: Պարզը ւեց, որ նա ո՛չ միայն Ալիքուչակ գիւղի, այլև ամբողջ Աբարանի շրջանի միակ հնչակեանն է: Եւ իրօք, Աբարանը Հ. Յ. Դաշնակցութեան տւեց 14 հազար և մի քանի հարսիւր ձայն. մէկ մարդ միայն չմօտեցաւ քւէտառուփին. և այդ Մացակն էր: Ինչու: 1905-ին Մացակը մեղաղբւել է լրտես-դաւաճանի ծանր յանցանքի մէջ: Արսէն Աղան (Պաֆփիի «Խենթը» վէպի հերոս Խենթի՝ Սամսոն աղայի տղան) մուր է քսում Մացակի երեսին. պտացնում գիւղերը՝ նրան թքամեռ անելու: Նրա երեսին թքում են Աբարանի բալոր զիւղացիները. 2 օրէլ նա ցուցադրւում է Աշտարակի փողոցներում. թքում են անվերջ, բայց Մացակը չի մեռնում: Զակադաշնակցականի կենսունակութեան զաղտնիքը նրանում է, որ նա թքամեռ չի լինում: Պատմութիւնը մուր է քսել զաղութեանց Մացակների երեսին. ուզես՝ թքի՞ր—նրանք թքամեռ չեն լինի. ուզես՝ ոզեկոչի՞ր — նրանք քո դատին չե՞ն ձայնակցի. ուզես՝ իմացաբանիր — նրանք իրենց «բնական տեսաւորութիւն»ից չեն հրաժարւի: Զակադաշնակցական — զրան ասում են Նորին Անմեռ Դաւաճան Մացակ: Տառապի՞ր հայրենիքի համար, մարտնչի՞ր, զոհի՞ր, նահատակիր ս'րբան կուզես — Մացակն իր «արեխներն ամբողջ Երևան քաղաքի հետ չի փախիր»...

5) Բոլշևիկ անասուննն իր դունչը ներկեց մարդկային արիւնով և դարձաւ «յեղափոխական զազան»: Արտաստհանի հակադաշնակցականներն իրենց կտուցը դունաւորել են կնոջական շրթներին յատուկ ներկով և ուղղում են, չա՛տ են ուղղում, մեզ վրայ թողնել «արիւնակզակ յեղափոխական»ի տպաւորութիւն: Հնչակները խօսում են ինչ որ «պատմեց»ի մասին. ուազավարները յոխորտում են իրենց «քաղաքացիական անվախութեամբ»: Սակայն՝ ո՛ւր միայն հոգեսոր աղը կայ, այլ երբեք ք ստեղծագործ տեմպերամենա — ա՛յնաեզ սկսում է զարշելի վայրինաչութիւնը, խօսքի սաղիզմը: Սաղիսար հոգե-ախտաւոր ա՛յն տիպն է, որ սեռական համոյքը ստանալու համար՝ խոչտանդաբար ատանջում է իր զահը: Կենդանիներից՝ բորենին նեխած զիակներ է ուղղում, զերեկմաններ կողոպտում: Բուրենին գերեզմանապիզ մի կենդանի է, դիակի գող:

Թէ՛ սաղիսար մարդը թէ՛ բորենին վախեկոտութեան տիպարներ են: Դրանց բարոյական ծիւազութիւնը պայշանաւորում է հոգեսոր անտրիութեամբ: Անարի էակը մի՛շա էլ զարշագործ է: Նրա զործունէութիւնը դա վրէժենորութիւնն է վատչէր ակարի:

Թուրքը, օրինակ՝ բորենու բնազզով օժտւած սաղիսար մի էակ է: Նա ո՛չ թէ սիրում է, այլ պղծում. ո՛չ թէ կարեկցում է, այլ խոչտանգում. ո՛չ թէ ստեղծագործում է, այլ կործանում. ո՛չ թէ մարտնչում է, այլ ջարզում. ո՛չ թէ պաշտում է, այլ սրբազդում. ո՛չ թէ մշակում է, այլ խոպանացնում. ո՛չ թէ արդիւնաբերում է, այլ կողոպտում: Իր ժառանգական սաղիսար՝ նա իր զահը խոչտանգում ու պղծում է ո՛չ միայն սպանելուց առաջ, այլև մեղցնելուց յետոյ: Նա ո՛չ միայն ողջապիզ է, այլև դիապիզ:

Ծանօթ է, որ սեռամոլութիւնն ու սննդառական աղանութիւնը (իբր պղծում ի և կողոպտուի տեհնչանք) հանդիսանում են օսմանցիների կեանքի պատմա-քաղաքական հոլովոյթը պայմանաւորող ամենահիմնական ազդակները:

Թուրքը վախկառ է, բայց անզութ. նա նախապահած է, բայց լպիրչ. նա ամաչկոտ է, բայց սեռակենարուն:

Բոլոր սաղիսարները սեռակենարոն էակներ են. բոլոր սեռամոլներն, ի վերջոյ, սաղիսարներ են:

Սադիստը նաև սեռախտամիտ հայհոյաբան է. անշաւնչ առարկաներն ու վերացական գաղափարներն անգամ, նա պատկերում է իբր հետանքի առարկաներ ու նրանց չույզում՝ անձունիօրէն սեռիմաստ հայհոյանքներ։ Թուրքերէն հայհոյանքների անսպառ մթերանոցը, անգամ, առակներն ու առածները կարող են ահազին նիւթ մատակարարել՝ սադիստ մարդու հոգե-ախտաբանութիւնն ուսումնասիրողներին։

Թուրքը զազրախօս է։

Բոլոր զազրախօսները հոգով այլասերւած, անզօր սադիստներ են. բոլոր անզօր սադիստները, ի վերջ զազրախօսներ են։

Զազրախօսութիւնն անզօր սադականութեան հոգեւոր աւտոմատիան է։

\* \* \*

Զազրախօս է նաև հոգեբանօրէն հակադաշնակցակ ն «հայ» տիպը։ Դա ա՛յն սինլքորն է, որ իր բարոյական աղքատութիւնն ու մտքի թշւառութիւնը սքողելու համար՝ իր ներքին տկարութիւնը վերածում է խօսքի աւտոմատիայի։ Դա ա՛յն սրիկան է, որ Եկեղեցում դիմակաւորւած է իբր երկիւղած կրօնասէր, աղօթում է ջերմեռանդօրէն, հանդիսանում է «ազգային դաւանութեան» պաշտպանութեան ախոյանը, որ սակայն, Յիսուսը պատկերում է ո՛չ թէ իբր առողապապաշտ, իբէալիստ մարդարէ, այլ իբր սամարացի կնոջ, Մարիամ Մագթաղինացու հետ սիրաբանող անձ։

Դաշնակցութեան դէմ «գաղափարական» պայքար մզելիս՝ հակադաշնակցականը տուրք աալով իր էռութեան՝ զազրախօսում է։ «դաշնակցական այսինչ չէքը հանրակառքի մէջ կասկածելի կերպով բարեւած է անձանօթ տիկնոջ մը, այնինչը՝ կապ ունի իր ազգականուհու հետ. մէկ ուրիշը՝ աչք ունի իր ընկերոջ կնոջ վրայ. դաշնակցական կիները «շնորհներ» կընեն օտար նախարարներուն, ուսուցիչները «ազատ սէր կը քարոզն» են, են, են... էսութեամբ անբարոյական մտքի վիճակքներ։

Կաւատական այս բանդապուշանքները համարում են «գաղափարական պայքար»ի ղէնքներ։

Հակադաշնակցական «հանրային գործիչներ»-ի «խըմբագիրներ» կան, որոնք իրենց դիրքն ապահովում են

ո՛չ թէ մտածելու ընդունակութեամբ, այլ հայիոյելու, զբարանելու սրամառութեամբ։ Կտրգալով նրանց սպուփսոցը՝ մարզս մզւում է ընդունել, որ նրանց ուղեղներն ո՛չ թէ մտածման կինարոններ են, այլ սեռական մշտաբորբոք գործարաններ։

Խղճահարւել, ամաչել, զզւել. ի՞նչ անել, աստւածի իմ։

Անզօր սադականութեան հոգեսր այս աւտոմատիային միանում է նաև բորենիական էռութեան գիծը։

Ո՞ր դաշնակցականը սրբաղան սարսուռով չի համակւի հնչակեան հին մի նահատակի ուրւականի առաջ։

Իսկ ի՞նչ են անում հնչակ-ուամկավարները — նրանք հայհոյում են ո՛չ միայն մեր կենդանի գործիչներին, այլև մեր տեսական զաղափարաբանութեան և աներեւակայելին... անզամ մեր նահատակներին։

Ա՛հ, ոգու ի՞նչ զարհուրելի անկում։

Ա՛հ, թրքոզի սադիստներ, ինչո՞ւ հոգով ու սրաով այսպէս մեռաք. ինչո՞ւ մտածումով ու բարոյականով այսպէս վատասերւեցիք. ինչո՞ւ. ինչո՞ւ։

Եւ սակայն անկումը շարունակւում է. ուամկավար «Փարոս» թերթուկի խմբադիքը, օրինակ, ձգնում է ամեն կերպ հաւասարւել ախտաւոր չէտկ Մարթայեանին։ Հընչակ «Պալք. Մամուլը» չի ուզում ետ մնալ «Փարոս»ից։ Խծրծում, կցանարում, զրաբանում են անվերջ. հայոյում են անզամ նորագոյն Երօնակին։ Նրա հասցէին ուղղելով «հայվան», «էշակ» բառերը և այլպիսով էլ զլորւմ են ցած։ Իջէ՛ք, իջէ՛ք մինչև զարշանքի դժոխքը, ուր մի օր ձեր սերմական ականջներով պիտի լսէք յաւիտենօրէն եղկելի ձեր ճակատագրի դատավճիռը։

Ասում են, որ գժոխքից վտարւածները կրկին գժոխք մտնելու համար՝ այս աշխարհում նորանոր քսութիւններ պիտի անեն։

Ճիշդ են ասում։

Ք) Լրեսնամիք զբարանուրիւն. — Մուքօ անունով մի մարդ էր ապրում իմ հայրենի գիւղում։ Մի գիշեր նասողակում է մենակեաց Ղազէի խրճիթից ներս և ձեռքը տանում նրա բարձի տակ, ուր կոյր ծերունին պահում էր իր համեստ զանձը։ Ղազէն արթնանում է և բռնում

Սադիստը նաև սեռախտամիտ հայհոյաբան է. անշտանչ առարկաներն ու վերացական գաղափարներն անգամ, նա պատկերում է իր հետանքի առարկաներ ու նրանց շուայլում անձունիօրէն սեռիմաստ հայհոյանքներ։ Թուրքերէն հայհոյանքների անսպառ մթերանոցը, անգամ, առակներն ու առածները կարող են ահազին նիւթ մատակարարել՝ սադիստ մարդու հոգեախտաբանութիւնն ուսումնասիրսպներին։

Թուրքը զազրախոս է։

Բոլոր զազրախօսները հոգով այլասերւած, անզօր սադիստներ են. բոլոր անզօր սադիստները, ի վերջ զազրախօսներ են։

Զազրախօսութիւնն անզօր սադիստնութեան հոգեւոր աւտոմատիան է։

\* \*

Զազրախոս է նաև հոգեբանորէն հակաղանակցակ «հայ» տիպը։ Դա ա՛յն սինլգորն է, որ իր բարոյական աղքատութիւնն ու մտքի թշւառութիւնը սքովելու համար՝ իր ներքին տկարութիւնը վերածում է խօսքի աւտոմատիայի։ Դա ա՛յն սրիկան է, որ Եկեղեցում դիմակաւորւամ է իրը երկիւղած կրօնասէր, աղօթում է ջերմեռանդորէն, հանդիսանում է «ազգային դաւանութեան» պաշտպանութեան ախոյանը, որ սակայն, Յիսուսը պատկերում է ո՛չ թէ իրը տառապապաշտ, իդէալիստ մարդորէ, այլ իրը սամարացի կնոջ, Մարիամ Մազթաղինացու հետ սիրաբանող անձ։

Դաշնակցութեան դէմ «գաղափարական» պայքար մղելիս՝ հակաղանակցականը տուրք ատլով իր էութեան՝ զազրախօսում է։ «Դաշնակցական այսինչ չէքը հանրակառքի մէջ կասկածելի կերպով բարեած է անծանօթ տիկնող մը. այնինչը՝ կապ ունի իր ազգականուհու հետ. մէկ ուրիշը՝ աչք ունի իր ընկերոջ կնոջ վրայ. դաշնակցական կիները «շնորհներ» կընեն օտար նախարարներուն, ուսուցիչները «ազատ սէր կը քարոզ/ն» են, են, են... էռթեամբ անբարոյական մաքի վիժւածքներ։

Կաւատական այս բանդապուշանքները համարւում են «գաղափարական պայքար»ի զէնքիր։

Հակաղանակցական «հանրային գործիչներ»և «խըմբագիրներ» կան, որոնք իրենց զիրքն ապահովում են

ո՛չ թէ մտածելու ընդունակութեամբ, այլ հայիոյելու, զրաբանելու սրամատութեամբ։ Կարգալով նրանց սպուփանցը՝ մարդս մղում է ընդունել, որ նրանց ուղեղներն ո՛չ թէ մտածման կինարոններ են, այլ սեռական մշտաբորոք գործարաններ։

Խղճանարւե՞լ, ամաչէ՞լ, զզւե՞լ. ի՞նչ անել. աստւածիւն։

Անզօր սադիստնութեան հոգեւոր այս աւտոմատիային միանում է նաև բորենիական էութեան գիծը։

Ո՞ր դաշնակցականը սրբազն սարսուռով չի համակւի հնչակեան հին մի նահատակի ուրբատկանի առաջ։

Իսկ ի՞նչ են անում հնչակուամկավարները — նրանք հայհոյում են ո՛չ միայն մեր կենդանի գործիչներին, այլև մեր տեսական զաղափարաբանութեան և աներեակայելին... անզօր մեր նահատակներին։

Ա՛հ, ոգու ի՞նչ զարհուրելի անկում։

Ա՛հ, թրքովի սազիստներ, ինչո՞ւ հոգով ու սրաով այսպէս մեռաք. ինչո՞ւ մտածումով ու բարոյականով այսպէս վատասերւեցիք. ինչո՞ւ, ինչո՞ւ։

Եւ սակայն անկումը շարունակւում է. ուամկավար «Փարոս» թերթուկի խմբադիրը, օրինակ, ճգնում է ամեն կերպ հաւասարել ախտաւոր չէակ Մարթայեանին։ Հընչակ «Պալք. Մամուլը» չի ուզում ետ մնալ «Փարոս»ից։ Ածրծում, կոցահարում, զրաբանում են անվերջ. հայիոյում են անզօր նոագոյն Գրօսակին՝ նրա հասցէին ուղղելով «հայվան», «էշակ» բառերը և այդպիսով էլ գլորւում են ցած։ Իջէ՛ք, իջէ՛ք մինչեւ զարշանքի դժոխքը, ուր մի օր ձեր սեփական ականջներով պիտի լոէք յաւիտենօրէն եղկելի ձեր ճակատազրի դատավճիռը։

Ասում են, որ գժոխքից վատաւածները կրկին գժոխք մանելու համար՝ այս աշխարհում նորանոր քսութիւններ պիտի անեն։

Ճի՞շդ են ասում։

Բ) Լրեսամիթ զրաբանուրիւն. — Մուքօ անունով մի մարդ էր ազրում իմ հայրենի գիւղում։ Մի գիշեր նասղակում է մենակեաց Ղազէի խրճիթից ներս և ձեռքը տանում նրա բարձի տակ, ուր կոյր ծերունին պահում էր իր համեստ գանձը։ Ղազէն արթնանում է և բռնում

գողի դաստակը: Վերջինս՝ մի ճիզով ազատում է և փախչում, առանց իր ինքնութիւնը մատնելու: Առաւօտ՝ Ղաղէն պատմում է զիշերւայ պատահը: Ազնիւ և յարգըւած մարդ էր կոյր Ղաղէն — զիւղական մի իմաստում: Ո՞ր հայը կը յանդնէր վասութիւն անել նրան: Գիւղացիները համոզւած են, որ գողը հարեան քիւրդ զիւղերի ծանօթ աւազակներից մէկն ու մէկն է:

— Մեր զիւղում նման անզգամ մարդ չի լինի. զողը մուրատխանցի քիւրդ Ալօն է. պէտք է նրան արժանի դաս տալ, եզրափակում է զիւղապետ Տօնօն:

— Գողը հայ է և մեր զիւղացի, ասում է Մուքօն, պէտք է զոնել այդ անարդ հրէշը: Ի՞նչ՝ էլ մարդ չմնա՞ց աշխարհում, որ աղքատ և բարի Ղաղէի՞ն կողապահն. անսխիղձնե՞ր, չ զազաննե՞ր, անպիտաննե՞ր: Պէտք է զոնել զողը և մուր քսել երեսին. նա հայ չէ՛, նո զրացի չէ՛, նա թուրքի հոգի ունի: Սիրելի՛ Ղաղէ, խօմ չվախեցա՞ր, վա՛խ, վա՛խ, վա՛խ, Ղաղէ ջա՛ն, Ղաղէ ջա՛ն: Երանի՛ թէ Աստւած էե վայրկեանին ինձ քո երդիկից վար իջեցնէր. ես զիտէի, թէ էդ որիկային ի՞նչպէս կը պատմէի, զրացի չէ՛, աչքիս լոյսն էլ եթէ լինէր՝ նրան զետին կը փոէի:

— Մուքօն ջա՛ն, ձեռքդ ինձ առ՛ւր, ասաց Ղաղէն: Կոյր իմաստունը չօշափեց նրա դաստակը և հանդիսաւոր խաղաղութեամբ յայտարարեց:

Գիւղացինե՞ր, Աստւած վկայ, այս էր բարձիստակը խուզարկող ձեռքը:

Մուքօն մատնեց իր շարլաթանական ճառի շնորհիւ:

Գաղութահայ հակաղաշնակցական շարքերում անթիւ են Մուքօները, բայց չկան հազերան Ղաղէները: Այստեղ՝ Մուքօները շաղակրատում են, Ղաղէները ծափ զարկում: Ինչո՞ւ, որովհետեւ այստեղի Ղաղէներն ո՞չ թէ աչքով են կոյր, այլ հոգով: Եղիշէն ի զուր չէ զրել իր իմաստալից խօսքը. «կոյր զրկի ի նառազայիցն արեգական, սզիտոքիւն զրկի ի կատարեալ կինաց: Լա՛ւ է կոյր աչօֆ, բան կոյր՝ մօօք»:

Մտակոյր հակաղաշնակցականը հաւատում է հակաղաշնակցական զրանենդ շաղակրատին. վերջինս էլ օդաւելով առաջինի խորին աղիտառթիւնից, որ ըստ օրէ մշակում է հոգեոր ճիւղաղութեան արեստը:

Ո՞ւր ենք գնում:

Քրիստոնէական բարոյականը չի հանդուրժում մատնիչւլրաեսի զոյութիւնը: Նա դարերի անէծքով է կնքել Յուղայի անունը: Սակայն, Յուղան իր զարշագործ էակ՝ նսեմանում է հակաղաշնակցական զրաբանի նկատմամբ:

Յուղան 30 արծաթ ստացաւ, մատնեց, բայց յետոյ զզաց և համակւեց ինքնութիւնողական յուետեսութեամբ:

Հակաղաշնակցականը մատնում է նուև առանց արծաթի, զզալ չգիտէ և զրախօսական շաղակրատութիւնը համարում է քաղաքական իմաստութիւն:

Յուղայի ողին չարի և բարու մի ուազմաղաշա է, հակաղաշնակցականի ողին՝ սոսկ չարութեան չանձմարան: Նա բեկրեկւող էակ է, սա՝ տեական չարազործ: Նրա մատնութիւնն արդիւնիք է բարոյական սայթաքումի, սրա զրանենցութիւնը՝ օրգանական պահանջ է: Նա ընդունակ է խոստովանւելու: «Ես մատնեցի», սա պնդում է՝ մատնւածը՝ «մատնեց»:

Անթիւ են փաստերը, բայց մենք պիտի բաւարարւենք մի ընդհանրացումով:

Թուրքը չարդեց հայերին և աշխարհում լուր տարածեց, թէ հայկական նախաճիրները արդիւնք էին հայ յեղափսիսականների զործունէութեան: Հակաղաշնակցական հայն ո՞չ միայն միացաւ թուրքի տեսակէտին, այլև մէկ քայլավ էլ առաջ գնալով պնդեց. «Դաշնակցութիւնը կոսուել տեց հայերին»:

Ուուս բոլշեկիլը միացաւ թուրքին, տրոհեց ու նըսեմացրեց, սեղմեց ու խեղկեց Հայտասանը և անվերջ քարոզեց, թէ զաշնակցութիւնը թշնամի է Հայտասանին:

Հակաղաշնակցական հայը հոգեկցելով բոլշեկիկին՝ հրապարակ նեաւեց և սկսեց աղաղակել՝ «Դաշնակցութիւնը կործանեց Հալասանը»:

Բոլշեկիների և թուրքերի զրդումով և նրանց հանձեւի լինելու քսումատութեամբ՝ հակաղաշնակցական հայը մաս բոլոր երկիրների ոստիկանատաւները. հայկական եռակայնը ներկայացրեց իր արիւնահեղութեան մի խորհրդական, հայկական դատը՝ փակւած, դրօշակը՝ «կերպասի մի ծւէն», նրա ծածանումը տեղական դրօշների կողքին՝ մի վիրաւորանք աւետել երկրի քաղաքական պատւին.

Դաշնակցութեան վերազրեց հակապետական մի կազմու կերպութեան յանցանք, մատնեց նրան՝ իբր նոր կռիւներ, վրէժխնդրական ակտեր ծրագրող, հայ ժողովրդի և տրւեալ երկրի խաղաղութեան դէմ դաւադ տարր և մեզ փակցրեց ազգային ներքին «բօնամի»ի, «խառնակիչ»ի, «մատնիչ»ի տիտղոս:

Որդեզրելով լրտեսամիտ զրաբանութեան այս մեթոդը՝ հնչակ՝ ուսմկավար զործիչներն ու թերթերը շարունակում են խաղալ իրենց հետեւրդների տղիտութեան և հայ ժողովրդի համբերութեան հետ:

Այդ մեթոդի մասին զաղագար կազմելու համար՝ առնք մի օրինակ:

Երբ Շահվերդեանը «ներզաղթի զործով» Բուլզարիս եկաւ՝ ուսմկավար «Փարոս»ի մարդիկ բուլզարական մի թերթում տւին մի լուր, ըստ որում՝ Թիլվակից Սոֆիա է զնացել հայ մի պատւիրակութիւն՝ խնդրելու կառավարութեան, որ Շահվերդեանին զուրս վտարի երկրից և ներզաղթի զործը խափանի: Այս լուրը յետոյ «Փարոս»ը «թարգմանում է» և «ղիմակազերծ» անում Դաշնակցութեան «հականայաստանեան քաղաքականութիւնը»:

Մեր գիւղի Մուքօն, միա՛յն կարող, էր այսպիսի զիւամիտ մի ծրագիր յղանալ: Գողանալ և հաւար կանչել, սուտ փշել և ձշմարտութեան համար կուրծք ծեծել, դաւել և ազգային «առողջ» քաղաքականութիւն քարոզել, մատնել և ինքզինքը հալածական ցուցնել — սովորական զրաբաների զործեր չեն սրանք, այլ ցեղանենպութեան արւեստի մէջ կատարելազործւած բարոյական ձիւաղների՝ իսկական ցեղանենգ չէ յթաների:

Մուքօն՝ Ղազէին կողոպտելու փորձով՝ ուաքը զրել էր գժոխք՝ տանող ճանապարհին. կամաց-կամաց նա դարձաւ հայանենգ մի հրէց: Երբ իր պատիժն ստացաւ՝ զիւղացիներն ասում էին, թէ «շան սատակ եղաւ»:

Հոգով ու բարոյականով վաղուց մեռած հակաղաշնակցական Մուքօներն արդէն կանգնած են գժոխքի կենարոնում: Թուրքն ու բոլշևիկը նւազում են իրենց յաղթանակի եղանակը՝ «հայկական դասք մի կմախի է». Մուքօները բռնել են մեռելների պարը՝ «կեցցէ՛ Հայաստանի փրկիչ բոլեւիկը. կեցցէ՛ դաշնակ-հոյբուն դաւերը չբացնող բուրքը»:

Մեռելների պա՛րը... իսկնթացե՞լ են այս մարդիկ: Զե՞ն խենթացել, այլ հոգով ու սրտով շան սատակ են եղել և գժոխքում քաղաքանութիւն են խաղում: զ) Պայքար Մալիս 28-ի գաղափարականի եւ հայոց ազատութիւնը խորհրդանուղ ենազոյնի դէմ: — Թուրքն էր մօտենում հայոց աշխարհի բնական և հոգեոր կորիգ Այրարափի սրտին:

Արագածի կուրծքը չանգրւում է. Սարդարապատի գարբասը ծեծուում և Փամպակի ձորերում աներեակայելի դէպքեր են տեղի ունենում:

Հէ՛յ, ուաքի՛, զեզին յորձանքն է զալիս, յաւիտենական զիշերն է մօտենում — զեղն է վտանգւած:

Արամը վճուել է երեանի չուրջը օրհասական ճակատամարտ տալ — հայոց պատմութեան բոլոր գարերի ամենազերական և բախտորոշ ճակատամարտը: Զօրավար Սիլիկեանն ու Գրօն իրենց զօրամասերն են դասաւորում:

Ղարաքիլիսէի ճակատում ծերունի սպարապետ Նազարբեկեանը և՛ արտասուում է և՛ մարտի հրաւէր կարդում: Նօդինը ահակոչում է՝ «դէպի՛ Ղարաքիլիսէ»: Նրա դաշնակցական «Արագած» զօրամասը երգում է. «ամենայն տեղ մահը մի է». Տէր Մոլխիսեանի սիրաը իր մարտկոցից պայթում է իրը տարերային սումբ:

Էջմիածնում կաթողիկոսն օրհնում է հայ զօրքն ու ժողովուրդը — վերջին օրհնութիւնը, արդեօ՛ք: Չոել է իր մեծ և իմաստուն աշքերը և ասում է՝ «վնուել եմ բաղւել էջմիածնի վլատակների տակ»: Գարեգին եպիսկոպոսը, Ղւանդ երէցի տարազը հաղին՝ գիտնականի իր մեծ բանականութիւնը խցկել է սրտում, պայթելու աստիճան պրկւած երակներով սեղմել է ձեռքի խաչը և վաղարշապատի հրապարակում ամբոխին ճառ է ասում — «դէպի՛ նոր Աւարայր»...

Գաղթականների սայլերը ճոնչում են — մեր կեանքի երրոշ, որ թաւալւելով հայոց աշխարհի բոլոր ճամբաներից՝ էջմիածնում վերածւել է աներեակայելի մի ժխորի:

Էջմիածնի զանգերն անհընդհատ զօդանջում են: հաւարի ճիչը պայթեցնելու աստիճան սեղմում և ընդլայնում է մարզոց երևակայութիւնը:

Սպիտակ մի հրեշտակ իր թէը կախած զանգակատան

աշտարակից՝ Գարեգին եպիսկոպոսին ուժ է ներշնչում։ Փրփուրը բերանին՝ առլրականի պէս այս ու այն կողմն է վազվառմ — «մեր ցեղի պահապան նրեօնակն ասում է. դեմք՝ Սարգարապան եւ Բաշ-Աբարան»...

Մոլեգնած ամբոխի ալիքները բախւում են վանքի պարիսպներին և յետ վանւելով՝ խառնուում դէպի Սարդարապատ և Բաշ-Աբարան անցնող զօրամասերին։

Ճամբանների վրայ փռւում է աղեխարչ մի երդ — «Բարդ բարի վրայ չմնաց Բալըուրդ»։

\* \*

Կանոնաւոր զինւորներից, աշակերտներից, վետերան հայկակներից կազմւած մեր զօրամասը բարձրանում է Աբարանի լեռնագաշտը։ Դրօն կանգնել է մի ժայռի վրայ և աշխատում է իր զօրքերը զետեղել Արագածի հըրրահոսային (լաւա) շերտերի կրծքին։ Ճակատն սկսում է Արագածի զագաթից, իջնում Արարանի լեռնագաշտը և անցնում դէպի Մայրէնսի լեռները, կենարոնում՝ խճուղու վրայ ճախրում է Զեմլխակն ու յանկարծ ընկնում։ Ամբողջ երեք օր հայն ու թուրքը ջարդում էին զիրար և ճակատամարտի բախտը մնում էր առեղծւածային։ Վերեւում Արագածի ձիւների վրայից, թշնամին փորձում է թևանցք կատարել, մեր վաշտերն անցնում են ուինամարտի, որոշ աեղերում այլևս չուում է հրազնը, մարդիկ ատամներով էին զիրար յօշուում։ Եւ յանկարծ սկսում է «հուրբա՛»յի աղաղակը։ Հայ սզու տարերքը գերակշռել էր։ Մարդկային հեղեղի ալիքները շաչում էին ժայռերին։

Մեր զօրքի շղթան խելայեղ շունդով իր օղակները մղսում էր առաջ։ Թշնամու ճակատը պատուած էր. թուրքն էր փախչում մեր աշխարհից։ Մենք և՛ երգում էինք և՛ զարկում և՛ վազում։ Հասանք Շիրակի դուռը։ Օրը երկար է տակաւին. «լառա՛ջ, Տղամե՞ր»։ Թշնամու բանակն անյայտանում է։ Հեռուից սպիտակ գրօշներ են երեսում։ Հաշտութիւն էր կնքել. . .

Մայիս 28-ն էր։

\* \*

Ահա՛, այս օրւայ յիշատակն է, որ անարգում են հայ կեանքի ցեղանենդ շէյթանները։

Մայիս Քսաննւութ՝ ի՞նչ է դա. «քուրբերու պարագրած անկախութիւն»։ Այսպէս են «արամարանում» հակադաշնակցականները։ Հասարակ տիմարներ չեն այս

մարդիկ, այլ օրգանապէս զրանենդ հրէշներ։

Ինչո՞ւ, ինչո՞ւ, այդպիսի մի անկախութիւն է Ծաճկա-Հայտատանում չպարտադրեցին մեզ՝ նոյն թուրքերը։

Հայոց պատմութիւնը, ե՞րբ է արձանագրել նման մի վանդ — ցեղի սպառման վանդը։

Հայ կեանքը ե՞րբ է ունեցել նման ծառացում — հայրենիքի և մեր ցեղայնութեան կորիզը փրկելու ծառացում։

Հայը, ե՞րբ է տւել նման լայնածաւալ ճակատամարտներ (ես Բաշ-Աբարանն եմ տեսել. բայց անկարելին է տեղի ունեցել Սարդարապատում և աներեւակայելին՝ Ղարաքիլիսէւմ)։

Ե՞րբ է ցեղը մինչև իր սզու խորագոյն անդունդները այդպէս ճակատագրորէն ցնցւել։

Ե՞րբ, ե՞րբ ենք մենք ունեցել քառասուն հազարնոց ժողովրդական բանակ և հոգով ու մարմնով իր գոյութեան կուիրած միակամ ժողովրդուրդ։

Ե՞րբ է հայը միայնակ ծառացել ո՛չ միայն թուրքիոյ, այլև նրա թիկունքում կանգնած զինակիցների դէմ — Գերմանիոյ, որ իր երկաթեայ բունցքով հոկայ Ռուսասանի զիակը փոեց գետին։

Ե՞րբ է հայը թուրքին սպիտակ դրօշակ պարագրել։

Մայիս 28 — զա սպիրական յաղթանակի օր չէ, այլ մեր պատմական կեանքի ահաւոր ելեէջների օրհասօրէն յաղթական հանգըւանը. զա սոսկական կոիւ չէ, այլ ահարկու խոյանք։

Այդ օրը, հայերը ձմլեցին իրենց սիրտը և նետեցին ազատութեան ետեից — նետեցին ա'յնպիսի ուժգնութեամբ, որ նա «մինչև էսօր զնում է, հա՛ զնում»։

Նրա իմաստն ըմբռնում է ցեղաշունչ հայը — նա՛ որի սզում վրէժի մոլեզին կրակն է եռում և ազատութեան կարօտը։

Նրա ահարկու թափից և վսեմական խորհուրդից սոսկում է ցեղանենդ շէյթանը — հոգով կրտւած և սըրտով թլիմատւած «հայ» սարուկ անսասունը։

Դո՛ւ, թշւառակա՛ն, որ խնկի փոխարէն տկար հո-

գուղ աղբն եռ ծխում այսօրւայ Երևանին, չե՞ս հարցը նում, թէ նա ի՞նչպէս չվերածւեց պատմութեան խաւարի ծալքերում մոռացւող մի գերեզմանսցի:

Ծխա՛, ծխա՛ և այրւե՛ր ինքդ քո մէջ: Եթէ կուզեն խեղկասակե՛ր մեր ձանապարհին, հայոյի՛ր զոհերին ուրացիր Մայիս 28-ը:

Զգւանքը մէկ աստիճանով և՛ս կրարձրացնի մե մոլեգնութեան թափը:

Զգւանքը թոշող թեւեր կտայ, որ մենք է՛լ աւել շուտ խոյանանք դէպի նոր Մայիս 28-ը:

\* \* \*

Պատմական իրողութիւնն է, որ 1918 թ. Մայիս 28-յաղթանակով հիմք զրւեց հայոց քաղաքական կեանքի կառոյցին. հայը դարձաւ պետական ժողովարդ, իսկ Հայաստանը պետական-քաղաքական միաւոր: Նոյն տարւայ օգոստոսի 18-ին, Երևանում և շրջակայքում կուտակւած հայ զանգւածները հանդիսական մի «ալո՛» ասացին իրենց ճակատագրին: Բացւեց Հայաստանի Խորհուրդը ու և հանրապետական կառավարութիւնն ի պաշտօնէ ընդունեց Երկրի քաղաքական կեանքի զեկը վարելու պարագանութիւնը:

Հայաստանի Խորհուրդի նախագահ Ա. Սահակեանը (Հայը Արքահամ) խօսեց հայոց պարամենասական առաջին ձառը — «մեր երկրի սահմանները կրնարձակեն կեանքի երկարէ ուժով»: Դահլիճը դղրդաց: Գերման-աւստրիան-գարական ներկայացուցիչներն իրենց մտածկու հայ եացքները ուսուել են նախագահին (ի՞նչ էին մտածում): Թուրքերը նայում են ամե՛ն կողմ, սակայն իրենց հայ եացքը կենարոնացնում նազարբէզեանի և նրա զինուորական շքախմբի օթեակին. ճնուում են հիացմունք և խնդացութիւն բռնազբօսել: Դուրսը՝ զօրքը կազմել է պատկառազգու մի շլթայ և արձանացել՝ իբր անշարժ մի պատկեր: Ամբոխն ալեկոծւում է, ոմանք անընդհատ ծափանարում են, ոմանք՝ «կեցցէ՛» աղաղակում, ոմանք էլ ծնրադրել են՝ զլուխը կախ և լուռ—աղօթո՞ւմ են, թէ՞ զարերի հաշիւը կարդում:

Ի՞նչ էր պատահել:

Անսաւելիօրէն ողբերգական պայմաններում կատարել էր նշանակալից մի յեղափոխութիւն. դարերի կու-

տակած զգացումները թե առած իրար էին բախւել և մեր մեծ խաչելութիւնն ու անարկու ներոսականը խորհրդանշւել էին՝ կարմիր-կապոյշ-նարեցագոյն մի գրօնվկ:

Մի օր էլ եկեղեցական պատմականօրէն նշանակալից մի հանդէս անդի ունեցաւ էջմիածնի տաճարում: Կաթուկիկոսը նզավեց դարերի գերութիւնը, որն էց հայ զօրքն ու ժողովուրդը, Հայոց Աշխարհը, Հայաստանի Անկախութիւնը, մաղթեց որ, հանրապետութեան նւիրական դրօքը յաւիտեանս յաւիտենից անխոցելի մնայ և յիշեց «զիանը բավետութիւնս հայոց»:

Կարսում 1919 թ. գարնան, ապրեցի կեանքիս ամենայուղիչ մէկ վայրկեանը — տեսայ հայկական եռագոյնի խրոխ ծածաներ՝ հսկայ բերդի վրայ: Ա՛հ, ի՞նչ երջանկութիւն է այս անցաւոր յաւիտենականի մէջ, գէթ մէկ վայրկեանով ապրել ու զգալ ցեղի համրտանքի ու հզօրանքի խորհրդանշանը՝ հսկայ մի կոթողի վրայ:

Ռաֆֆին — ամենամեծ հայը — Մասիսի գագաթին հայկական մի զրօշակ երագելով՝ ձմլեց դարերի սիրաը և մեզ համակեց վերելքի կարոտով:

Եւ բարձրանում են նրանք, որոնք տեսան հայկական զրօշակի փառքը՝ բուն հայրենիքի մէջ, և նրանք, որոնք ապրեցին կամ ապրում են նրա խորհուրդը:

Բարձրանում է ցեղաշունչ հայը, բայց նրա դէմ ցցւած է ցեղանենդ չէ յթանը:

Բանդում՝ սալիսատ բալշեկիները Գրիգոր Մոկացուն տանջելիս՝ պահանջաւմ են, որ հայ ալեսը վագրը կոխեըրտի հայ անկախութիւնն ու հայ յեղափոխութիւնը խոչըրդանշող զրօշակները: Հին հայրուկը խոնարհում է գետին, վերցնում զրօշակները, համբուրում է և ողբում...

Ի՞նչ անենք մենք, որ հոգով ի ծնէ ներքինի, մըտածումով ու բարյականով ճշմարտորէն թզուկ-սազիստները սողօսկում են օտար ապգերի սոսիկանատուները, գաղանի հէքիաթներ են պատմում կամ իրենց պղծաթերթերում՝ հայկական զրօշակն որակում են իբր «կերպասի ծին»:

Մարդկային մտածումն ունի երկու գիծ՝ վերլուծական (անալիտիկ) և համարդաբան (սինթետիկ): Վերլուծականը նպատակազիր է երկոյթների բաղկացուցիչ մասերն ու տարրերը գանել, համարդաբանը՝ մասերի և տարրերի ամբողջականութիւնն ըմբռնել: Վերլուծական հողերանութիւն ունեցող անհատը, եթէ որոշ կրթութիւն և պատրաստութիւն ունի՝ նւիրաւում է զիտութեան, եթէ աղջու է՝ զառնում է լրակո, մատնիչ, խառնակիչ: Նմանը ձիզ է թափում գաղանիքներ կորզել, մերկացումներ տել: Մերկ է նրա ողին և նա ձգառում է աշխարհը մեր-

կացած տեսնել։ Նմանի համար չկայ խաչ — կայ փայտի, մետաղի կտոր. չկայ հայրենիք — կայ լեռների, դաշտերի, բլուրների, հովիաների. աղբեւրների, գետերի մի զումար. չկայ մարդ — կայ մսի, սոկորի, ջղերի, երակների. ոննդական նիւթերի և աղբի մի հանգոյց. չկայ ցեղի իդեալը խորհրդանուղ դրօւակ — կայ կերպասի կտոր, զոյն։

Սովորական մի վերլուծաղ չէ հայ հակադաշնակցականը. նա տղիառւթեան և կրքի մի տոպրակ է. ուժով միայն նրանում կարելի է մի քիչ զաղափար աեղաւորել, բայց երբեք կամաւոր կերպով։

Շոպէնառութէն իր զրւածքներից մէկում մէջբերում է սպանիական մի առած — «պատին ու դրամը չեն պարտկում միեւնոյն տոպրակում»։ Զօրով զաղափար սեղմել է ութեամբ փերեղակի հոգեառապրակում — նշանակում է կամ տոպրակը պատուել կամ զաղափարի պատիւն արատութել։

Դրօւակը ցեղի բաղաբան պատիւն է։ Նա երեան է գալիս, երբ ցեղի կամքն արձանանում է իրը յաղթանակ — օրինակ, իր 1918 բականի Մայիս 28։ Այս իմաստով դրօւակը պատմական արժէք է։

Պատմական ամեն եղելոյթ, սակայն, տւեալ ցեղի է ութեան յաւիտենական ինքնակիրապաւորման մի դըրւագն է։ Պատմութեան մարզում, այս զրւածները չեն մնում իրը անկապանկապ բեկորներ, այլ շղթայակցում են միմեանց։ Պատմական առաջընթացը (պրոցէս) դէպքերից հիւսւած մի շղթայ է, որ երկարում է անծանօթ կամ յիշելի անցեալից և ներկայի կամուրջի վրայով ձգւում է դէպի զալիքը — ապագան։ Այս իմաստով զըրոշակը մի զաղափար է — ցեղի ինքնայաւիտենականացման սիմբոլ։

Քաղաքական պատիւ, սակայն, ունեն նրանք, որոնք ընդիանապէս անպատիւ չեն. ինքնայաւիտենականացման տեսչ ունեն նրանք, որոնց ոգում ցեղի նրազն իսպառ չի մարել. գաղափարով համակւում են նրանք, որոնք սեղծագործական երկունք ունեն իրենց սրտում եւ բարոյական ուժ՝ իրենց ողջ եռեան մեջ։

Հակադաշնակցականը հոգեբանութեան մէջ ծանօթ

պինդակորիկ տիպն է։ Նա առօրեայով ապրող զռեհիկ էակ է. իսկական հաւատամերկ (թաթարերէն՝ «իմանը չըպայտ»)։ Շուկայում նա որոնում է կանչիկի զրամը. պատմական եղելոյթներն ըմբռնում է իրը կոպիտ ներկայ, գիտէ անցեալը գնահատել, չի հաւատում ապագային։

Ի՞նչպէս նրան զրօշապաշտութիւն պարտադրել, երբ յեր եռապոյնն անցեալի արժէք է և ապագայի յոյս, երբ նա այժմ տարագիր է և հայ զօրքի ուինը ցցւած չէ նրա ետև։

Սւինն անցել է թուրքի և բոլցեիկի ձեռքը։ Ի՞նչ անել. կառչել հայկական եռապոյնին — նշանակում է նիշակ ճօճել նրանց դէմ։ Մինչդեռ արուրքի ականջը անուց խօսելով ույելու է։ Զեմ մոռանում խօսքը փթած հոգով ա'յն հայ հակադաշնակցականի, որ անգամ Պրազայի սրճարաններից մէկում, ապատկ էր ըստ առցել մի թուրքից և խնդրում էր մեզ՝ հրաժարւել նրան պատմելու մտքից։

Թուրքն ու բոլցեիկը հայնոյում են մեր զրօշակին, սրպէնեակ գիտեն, որ նա մեռած մի յիշատակ չէ, այլ կենակնի մի ուժի քաղաքական սիմբոլը։ Հակադաշնակցականը թուրքի և բոլցեիկի «ականջը անուց խօսելով» համար՝ ճգնում է ցոյց տալ, որ ինքը հայ կենանութեան նշանակի նետ, որեւէ կապ չունի։ Դրայինամար է՝ նա ո'չ միայն փախչում է մեր եռապոյնից, այլև հայնոյում է նրան։ Այսաեղ՝ նա ցուցահանում է ուրացողի հոգեբանութեան զագրելի, բայց բնական զծերը։ Թուրքիոյ հայերը կյիշեն որ, իսկական մահմեղականը միայն զայրանալիս էր հայնոյում մեր հաւատին. իսլամայած հայը՝ շարունակ։ Վերջինս այլպէս էր անում ո'չ միայն համոզելու շրջապատը, թէ ինքը հոգով-սրտով հոլամացած է, այլև ինքնահամոզելու, թէ լրբաւթեան ինամի կոմով կարելի է յաղթահարել ներքին տկարութիւնը, ամոքել խղճի խայթը։ Դրօւուրաց հայը իր ներքին սկարսութիւնը վերածել է տխմար զառանցանքի։ Նա զըրում է պարզապէս և չի հասկանում, որ անցել է ժամակը, երբ մարդիկ էշով էին երաւաղէմ գնում։

Կովկասահայերը հնչակ տիպը անւանում էին «սաղացեցեալ»։ զալութահայ հակադաշնակցականը, սակայն,

կաղ-կենդանի է: Բարոյապէս կաղալ — չի՞ նշանակում, սակայն, վանագից զերծ մնալ: Գալիս է փոթորիկը և ամենից առաջ տկար տունին է արմատախլում:

Ա՛ն, հայկական ակարութիւնն, մենք կարեկցում ենք քեզ և զբա համար էլ ամուր կառչած ենք մեր զբարակի խորհրդին, համակաւմ ենք վերելքի կարօսով և քայլում ենք վասնգի կամ րջի վրայից:

Հայկական եռազգոյն... դա վասնգի ասաղն է, որի հետքերով քայլում է վրիժապաշտ հայը — քայլենք և հարւածենք:

Անհնա'ր է, որ մեր քայլերը մի կայանի չյանգեն. անհնա'ր է, որ մեր հարւածները անիրաւութեան բուրդերը չխռապակեն:

Աշխարհը յդի է նոր կարելիութիւններով. բախենք բախտի դուռը: Կրգայ արշալոյսը և մրտած դէմքերով մարդոց մի կաղ-կարաւան կանգ կառնի հայոց աշխարհի դրան և կասի:

— «Ների՛ր ինձ, հա՛յ դրօւակ, որ իմ Տիարութիւնը մի օր նեզ ուրանալու անառաքինութեան մը դից ինձ: Անառաքինի էի, որովհետեւ սոր եկ եւ սոր եկ, որովհետեւ հոգով սրուկ եկ»:

Դ) Երեւանի վերածնութեան տարփողում եւ Եերգաղիք շահագործում. — Պատմական Հայաստանն ունի 380,000 ք. քիլոմետր արածութիւն, բնական Հայաստանը (Հայկական Բարձրաւանդակ, Մեծ Հայք) 220,000 ք. քիլոմետրը: Դաշնակցութեան իշխանութեան օրօք, մեր եռազնը ծածանում էր 46,000 ք. քլմ. արածութեամբ մի երկրամասի վրայ: Ըստ Սեւրի դաշնազրի նախատեսութեանց՝ Թուրքիայից պիտի խլեէր մօտաւորապէս 100,000 ք. քլմ. արածութեամբ մի հողամաս: Վրաստանից և Աղրբէյջանից մենք պահանջում էինք 22,000 ք. քլմ. արածութեամբ շրջաններ:

Մրագրւել էր համահայկական լայնածաւալ ներգաղթ. երկիր էին հրաւիրում ո՛չ միայն Թուրքիոյ հայերը, այլև զարերից ի վեր հայրենիքից արտազաղթած զանդւածները (Մոռասատանի, Լեհաստանի, Հունգարիոյ, Պարսկաստանի և միւս բոլոր երկիրների հին զաղութներից պահանձել՝ «ոնրագործ հայերի եւ դաշնակների» դէմ, որոնք

թը): Հայաստանը պիտի հիւրընկալէր նաև զգացումով հայութեան կապւած ասրբերը՝ ասորիները և եղիդները: (Սինջարի եղիդների կրօնացեղապետ Միր Իսմայիլը ուրառուուչ մի զիմում էր արել հանրապետական կառավարութեան և մի կոնդակ էր յդել Հայաստանի եղիդներին, որոնք վերջապէս սիրելի հայրենիք Հայաստանի ազատութիւնը տեսնելու բախտը ունեցան:

Սեւրի դաշնազրի գործազրումով և հայ-վրացական ու հայ-աղրբէյջանեան կնճիռների հաշւեյարգարումով՝ Հայաստանն առաջին հերթին պիտի ունենար շուրջ 178,000 քառ. քլմ. արածութիւն և 4 ուկէս միլիոն բնակչութիւն, որից 3 միլիոն հայ—կէս միլիոն յոյն (300,000), ասորի (80,000) և եղիդի (120,000) — քիւրդերի թիւը նախահաշւեում էր կէս միլիոն, նոյնքան էլ թուրքերի, թաթարների և այլ մահմեդականների:

Կազմուում էր երկիրը վերա-ևնորակառուցելու նախագիծ: Պիտի հիմնեէին նոր քաղաքներ. կարճ ժամանակից հայկական երկաթուղային ցանցը Երևանին պիտի միացնէր Տրապիզոնն ու Բիզնէն, Երզնկան ու Կարինը, Վանն ու Բաղէչը, Մուշն ու Ալաշկերտը:

Ժողովրդի բնական աձման բարձր կարողութիւնը ենթադրել էլ առաջ, որ 1935—40 թւականներին հայութիւնը պիտի հասնէր 4 ուկէս — 5 միլիոնի: Եենւած մեր ժողովրդական ուժին, մէր երկրի բնական դիրքին, մեր բարձր հայրենասիրութեան՝ մենք Մուշից ու Երզնկայից աստիճանաբար պիտի առաջանայինք դէպի Տիգրանակերտ ու Խարբերդ, Սերբասիա ու Կիլիկիա: Պիտի վերաստեղծէր պատմական Հայաստանը և աշխարհը զարմանքով պիտի տեսնէր հայ ողու մեծազոր թոփչքները:

\* \*

Հայկական այս վտանգը ցնցեց առձիկներին և ոռւուներին: Էնվէրն անցաւ Մոսկւա և հիւրընկալւեց «հայ» մեծամասնական Կարախանի կոզմից: Եեղի դանիճն ու հայցեանենդ շէյթանը միացան: Իրար ետելից Մոսկւա հասան նաև քէմալական գործակալների խմբեր: Բազւի «աւելելեան մրգութեան համագումար»ի նախագահ Զինվիէլը քւէարկեց էնվէրի և Իբրահիմ-թալիի մշակած բանաձեւ՝ «ոնրագործ հայերի եւ դաշնակների» դէմ, որոնք

«վճռել են ոչնչացնել բուրք խաղաղ եւ աշխատաւու ժողովուրդը»։ Մեծամասնական սպառ տիզմը եռքի մէջ էր։ Ներկայ էին նաև 280 բոլշևիկ «հայ»եր։ Անչափելի էր նրանց զագրելի հոգիների քսութիւնը։ Հայաստանի մասնաց զագրելի հոգիների քսութիւնը։ Հայաստանի մասնաց հավճռն էր տրւում և «հայերը» ցնծազինս ոռնում էին և ծափ զարկում։

Այս լուրերը հասնում էին Հայաստան։ Հանրապետական կառավարութիւնը ձեռք էր բերել նաև բոլշևիկ-թրքական զաղանի զինակցութեան որոշ մանրամասնութիւնները, ըստ որոց, բոլշևիկները համաձայնեւել էին ո՛չ միայն ամբողջ Տաճկա-Հայաստանը, այլև Կարսի շըրջանը տալ թուրքիոյ։ Այնուամենայնիւ կառավարութիւնը փորձեց լեզու գոնել մեծամասնակների հետ։ ապարդիւն փորձ։

Բոլշևիկ-թուրքական զինակցութիւնը պայմանաւորում էր հոգեբանական ու պատմա-քաղաքական բարդ և խոր պատճառներով։

Հոգեբանօրէն՝ ոռւսը մազսխստ է (տառապապաշա), թուրքը՝ սաղիստ (Ակապաշտ)։ Նա կրաւորական ճիւտող է, սա՝ ակախ հրէ։ Այս երկու հոգեզծերն էլ յանդում են բարբարոսութեան։

Պատմականօրէն՝ ոռւսը մի՛շտ էլ դէմ է եղել հայկական առանձին պետութեան զաղափարին — դէմ ո՛չ միայն յանձին նիկոլա Բ. ի պէս թղուկ ցարերի, այլև հայսէր համարւած Պետրոս Մեծի և Կատարինէ կայսրուու։ Թուրքի տեսակէտը, այս խնդրում, ծանօթ է բոլորին։

Քաղաքական՝ աեսակէտաից, բնորոշ է, որ Ռուսաստանն ու Թուրքիան պատերազմի մտան իբր թշնամիներ և նրանից գուրս ելան՝ իբր գաշնակիցներ։ Երկուոն էլ իբրեւց մայրաքաղաքները փախցրին ծովեզրից և ամփոփւեցին ցամաքի կենարոններում — Պետրոպալոն իր գիրքը զիջեց Մոսկացին, Կ. Պոլիսօ՛ Անդորային։ Սա մի քը զիջեց Մոսկացին, Կ. Պոլիսօ՛ Անդորային։ Սա մի նահանջ էր ծովի ուրւականից — անզլիական ուժից։

Ռազմա-քաղաքական այս ճակատագրական փախուստին՝ զուգահեռուել էր ներքին բարյական խորհանդակը։ Տեղի էին ունեցել ահազին փլուզումներ։ Ռուսաստանում խորտակւել էր ցարական գահը, տաճկական սուլթանը։

Կծկւել էր Պոլսում՝ իբր խրաւիլակ։ Ռուսը լքել էր պահումաւիզմի զաղափարականը և սրդեղրեւէ համայնավարական սկզբունքը։ Թուրքը հրաժարուել էր պահիսաւմիզմից և կառչել՝ պանթիւրքիզմին։ Սոցիալ-քաղաքական այս ներհակ մարումները յդկւելով տարերային խորհանդակի ավելիքից և անցնելով խումականութեան և մեծամասնաւիքից։ Կանութեան էակցութեան բովից՝ զուգահեռուեցին միմւանց։ Բրիտանական ուրւականի սարսափից բոլշևիկեան մատերիալիզմը սիացաւ իսլամական մատերիալիստական սենսուալիզմին (նիւթագուշտական զգայապաշտութիւն)։ Նրանց մէջտեղում կարկառուած մնաց՝ հայկական իդէալիզմը։

Մարքսեան արամատական (դիալեկտիկան) պատմահայեցզութիւնն ու իսլամական ճակատագրապաշտութիւնը հանդիպելով միմեանց՝ հաշտեցրին «պրոլետական յեղափոխութեան» եւ միլլիական ջիհատի շահերը։

Մոլեոանդ խորժաները պաշարել էին մեզ։ Բոլշևիկները հիւսիսից և արևելքից աղաղակում էին։ «մա՞ն իմպերիալիստական Հայաստանին — նանապարհ պրոլետարիան յորձանին»։ Հարաւից և Արևմուտքից ոռնում էին մասնաւիզմը, «մա՞ն քրիստուկան դահին հայերին — նանապարհերը, «մա՞ն համարուրանական ուխտին»։ Խլրառումի մէջ էին հայ ցեղաննող շէյթանները — բոլշևիկ լրտեսները՝ «ոռւսն է զալիս»։ ալեկոծւում էին երկրի թաթար զանգւածները՝ «բուրքն է զալիս»։

Հոգեբանական և սոցիալ-քաղաքական նման միջավայրում՝ անհնար էր լեզու զոնել։ Դարերն իրենց ժանգու կրունկներն իրար էին քսել։ Ռուս ոզու բորբոսն ու սառն յիմարութիւնը միացել էին տաճկական արիւնաքաղը նենդամաւութեան։ Հայ բոլշևիկները ճգնում էին խաղալ կաւատ-խորդականի գեր։ Նրանք՝ 1922 թ. մայիսին, մի քանի վայրերում առաջացրին խոռվութիւններ։ Բոլշևիկները՝ ռուսներից, թաթարներից և ցարական բանակի 1914-17 թ. զերեգարած ու Սիրիք աքսութած աւաճիկ զինւորներից կազմած «ինտենացիոնալ» բանկով յարձակեցին Զարաբաղ-Զանզեզուրի վրայ։ Զանզեզուրում սկսւեց օրհասական կոիւ։ Դիլիջան - Իջևան ճակատում՝ հայ զօրքը հերոսական խոյանքով պաշտպա-

նույն էր հայրենիքի սահմանները։ Օլթիկ կողմից գեպի կարս առաջանալ փորձող տաճկական գօրամասը մասնըւեց խայտառակ պարտութեան։ Հայ զօրքը՝ աւելի մի ծայրով սրբեց նաև երկրի թաթարական սուտար զանգւածների հետքը։ 1920 թւականի հերոսական ամառը — դա հայ փոքրիկ ժողովրդի հոգեսր տիտանականութեան արձանացման պատմականօրէն անմոռանալի շրջանն է։

Պատերազմը պատմութեան կուտակած զգացումների անբանական պառթկումն է։ Նա՛ փեղիկական ուժերի սոսկական բախում չէ, այլ մարդկային ոգու ինքնարտայայտման ամենաթափոս կերպը։ Պատերազմում մարտընչող բանակները ներկայացնում են ժողովուրդների հաւաքական կամքը, նրանց գոյութեան կոահումը։ Մէկ միլիոն հայերի ծառացումը 150 միլիոննոց Ծուռաստանի, 10 միլիոննոց Թուրքիոյ և սրանց զինակից թաթարների և քիւրտերի գէմ՝ ապակայ սերունդներին պիտի թւայ՝ հրաց։ Ցեղն ապրել էր իր էսութեան խոռվքը, հարիւրապատկել էր իր կորովը։ Ի՞նչ թափ, ի՞նչ յոյս, ի՞նչ հաւատ և քաջութիւն ի՞նչ վեհապանծ թոխք։ Անհաւասարութերի օրհասօրէն ներսամկան նման պայքար՝ մարդկային պատմութիւնը, թերեւս, միայն 1918-ին է արձանագրել, այն էլ, դարձեալ, Հայաստանում, Մալիս 28-ին, երբ հայը ծառացել էր Թուրքիոյ և նրա աշխարհասասն գինակից Գերմանիոյ գէմ։ Բայց ինչո՞ւ չարախնալաւ, որ պատմութեան բիրս ուժը մեզ պարտադրեց 1920 թւականի տիսուր աշունը, երբ ընկաւ Կարսը և թուրքն ու բոլցերի ներխուժով Հայաստան՝ սատացն իրենց նախորոշեալ բաժինները։

\* \* \*

Զարախինդում է հակագաչնակցական տիպը, բայց երեկ'ք տառապում, որ ցնդեւց ցեղապաշտ հայի երազը, որ թուրքին մնաց ամբողջ տաճկա—Հայաստանը, Կարսը, Արարատեան դաշտի կարեսը մէկ մասը (Սուրմալուի գաւառ), հայոց նուիրական լեռը (Մասիս), Բագրատունիների փառահեղ մայրաքաղաքի (Անի) պաշտելի աւերակները, որ երկրի սրասում բոյն դրեց Արքելջանը՝ ստանալով Նախիջևան-Շարուրը, որ նոյն Ասրբեյջանը տէր դարձաւ հիւսիսային Հայաստանի բնական ամրոցը կազ-

մաղ Ղարաբաղին և լեռնային գանձակին, որ Վրաստանին մնացին Ջաւախիքն ու հայկական Բորչալուն, որ Միացեալ և Անկախ Հայաստանի փոխարէն՝ Անդրկովկասի մի անկիւնում կծկւեց Խորհրդային Հայաստան անունով ուսուական խղճալի մի նահանգ՝ 28,000 ք. քլմ. տարածութեամբ և 800,000 բնակչութեամբ (հիմա 1 միլիոն, որից հազիւ 900,000-ը հայ)։ Զարախինդում է հակաղաշնական սինլոքը, որ Երեւնում «ՀՏԵՍՆԵԱԾ օթնարարութիւն» կայ, բայց մէկ-երկու հազար ներգաղթողների համար բնակարան չկայ, որ Հայաստանը կողպասող ուսուը՝ «կը լրացնէ» երկրի բիւղչէն, որ Անդրկովկասեան խորհրդային «Եղբայրական» դաշնակցութեան անդամներից վրաստանն ու աւրբէջանը սեփականել են Թիֆլիսի և Բագուի հայկական անբաւ միլիոներին հարստութիւնը, որ նրանք խորհրդային բիւղչէից օպտում են 4-5 անգամ աւելի՝ տաել է՝ իւրաքանչիւր տարի առաջ են գնում 4-5 քայլով, իսկ Խ. Հայաստանն անում է կիսակաղ մի քայլ միայն։

Զարախինդում է հակաղաշնակցական հրէշը, որ բոլշևիկները լայնածաւալ ներգաղթ կազմակերպելու փոխարէն՝ շանտաժում են մէկ քանի հազար «ընարեալ» ների թշւառութիւնը, որ Խ. Հայաստանն «առաջ է գնում», «ժողովուրդն աճում է և բազմանում», բայց ազգի  $\frac{2}{3}$ -ը նրանից զուրս է մնում, որ «աճողների» և ներգաղթողների համեմատութեամբ՝ 2 անգամ աւելի մարդիկ հեռաների են երկրից՝ արտագաղթելով կամ փախչելով, որ նույն են երկրից՝ արտագաղթելով կամ անհաջան մի երկային։

Ցեղանհնգ շէյթան, մեր ցեղայնութեան սիւների ձորձառառմը նրան թւում է յաղթանակի աւետիս, մեր երկրի յօշատումը՝ վերածնութիւն, չեկայի հազարաւոր զոնդիւնը՝ խաղաղութիւն, մի քանի հազար փոհերի հոնդիւնը՝ ներգաղթ, միլիոնների թամարդոց տեղափոխութիւնը՝ ներգաղթ, միլիոնների թափառնքը և տասնեակ հազարների արտագաղթը երկրից՝ ոչինչ կամ անհաջան մի երկային։

Բուրգազում՝ մի մունեափկ — ոմն Ամիրա — մի օր փչում էր, «Նաւը պիտի գար երեկ, բայց վաղը ընտրու-

թիւն բլլալուն՝ պիտի զայ Յօր վերջ. ընտրութեան մասնակցելէ լեսոյ 4000 հոգիով համբայ պիտի ելլենք»: Այս մունեաթիւը սքանչելի կերպով բանձեւ էր արտասահմանի հակադաշնակցականների ներգաղթի քաղաքականութեան իմաստը. «Ներգաղթի նօանախօսով զանգվածների տրամադրութիւնը ոգտագործել՝ գրաւելու համար հոգաբարձութաղականական արոնները»:

Նոյն Բուրգազում՝ մէկ ուրիշ ներգաղթականի — մէն Երևանդ, մականւանեալն «քիւրտ» — հետ խօսելիս՝ մեր մի ընկերն ասել է.

— Երկիր հանելով դաշնակցական պիտի դառնաք: Ներգաղթականը պատասխանել է.

— Ընդհակառակն մենք կերթանք Դաշնակցութեան «հեօքը» կտրելու:

Այս հայրենակիցն էլ խտացնում է բոլշևիկների ներգաղթի քաղաքականութեան իմաստը. «Ներգաղթի նըւանաբնով՝ արտասահմանում վարկաբեկիլ եւ տիարացնել Դաշնակցութիւնը, իսկ երկրի ժողովրդի դաշնակ հոգեբանութեան դէմ՝ արեւմտահայ հակադաշնակցական ներգաղթողները դարձնել արգելիչ բումք»:

Ամիսներ յետոյ՝ նաւն եկել և տարել է թէ՛ մունետիկին թէ՛ «քէօքը» կարողին:

Հայաստան հասնելուց յետոյ՝ մունեաթիւը աղետում է, մատնում զրկանքների և կէս-հիւանդ կէս-խելազար վիճակում, մահաւան անկողնում անվերջ զառանցում է. «օգնութիւն, օգնութիւն»: Մեռել է, թէ՞ տակաւին տառապում է. — զիսեմ: «Քէօք» կարողը մերգալուել է «մէկ քիւօգրամ ալիւր զողանալու» յանցանքով և... գնդակահարել է:

Զարհութելի, բայց մութ պատմութիւն:

Պատահական արկա՞ծ, սովորական հիւանդութիւն, խելազարութիւն, «մէկ քիւօգրամ ալիւրի» գունդկատենչ զողութիւն, թէ՞ խորին հիւանթափութիւն, խղճատանքի փոթորկում, զղջում - սթափում հոգեսոր լուսագնապ, ընդզումքի ներքին փորձ, վերափրկւելու անզօր ձիգ, խեղդւած բողոք:

Յամենայն գէպս՝ զարհութելի պատմութիւն. խաղաղութիւն ձեզ, խեղճ մարդիկ. թողութիւն ձեզ, խարւած, յիմարօրէն մոլորւած, բայց ձակատագրով անբա՛խտ հայրենակիցներ:

Ե) Սեւացում Դաշնակցութեան «արկածախնդրական» անցեալի. — Հ. Յ. Դաշնակցութեան վերելքն սկսւեց 1896-97 թ. թիւն, երբ այս կուսակցութեանը «Բանկ Օտտոմանի» գրաւման և «Խանասորի» արշաւանքի «արկածախրազրութեամբ» փորձեց լուծել հնչակեանների ցուցաբարական զարձունէութեան հետևանքով կոսորտած 300,000 հայերի, Աւետիսիսանի հետ զոհւած 1000-ի չափ «արմենական» երիտասարդների, հնչակեան Մարտիկի, դաշնակցական Պետօի վրէժը և յուսահատութեան մատնւած հայ զանգւածներին, բարբարոսութեամբ ամբարտաւանացած թուրքին և անաւարբերոյն սակարգող Եւրոպային հառկացրեց, թէ հայ յեղափոխութեան կրակն ո՛չ միայն չի մարւել, այլև իրդեհը նո՞ր է բոցավառւում: Ի՞նչպէս եղաւ, որ «արկածախնդրական» այս ակաերով՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը ձմլից կասկածամիտ եւ զգուշաւոր հայ ժողովրդի սիրաց և յետայնու՝ հանդիսացած հայ քաղաքական միակ դրօւակիրը, անզամ՝ զադարեց «կուսակցութիւն» լինելուց և ամբողջ Մեծ Հայքի սահմաններում դարձաւ համաժողովրդական հոգեբանութիւն:

Ուսւու կառավարութիւնը 1903-ին որոշեց գրաւել հայ եկեղեցական կալւածները: Ի՞նչպէս եղաւ, որ Անդրկովկասի ամբողջ հայութիւնը միացաւ Դաշնակցութեան կազմակերպած «արկածախնդրական» ընդդիմութեան:

Սասունում՝ 1904-ին, պայթեց ապստամբութիւնը: Ի՞նչպէս եղաւ, որ դաշնակցական այս «արկածախնդրութեան» դեկալարներից հայրուկ Անդրկովկասի դարձաւ հայոց ազգի ամենաժաղավագան դէմքը — Լէկենդար Հերոսը:

Ուսւու կառավարութեան գրդաւմով՝ 1905-6 թ. թիւն, ոտքի ելաւ Անդրկովկասի թաթարութիւնը: Դաշնակցութիւնը կազմակերպեց հայ ժողովրդի ինքնասլաշտափանութեան և թաթարութիւնն ու ցարական հայաննենդ պաշտօնէութիւնը պատառելու ամսաւելում «արկածախնդրական» գործը: Ի՞նչպէս եղաւ, որ Անդրկովկասի հայ մտաւորականութիւնը, հոգեւորականութիւնը, ժողովրդի հարուստ և աղքատ, քաղաքէնի և զեղջուկ խաւերը — բոլորը, բալորը — զինուորական կատարեալ կարգապահութեամբ հետևեցին զաշնակցական հրամանատարների, խմբապետների,

մարմինների հրահանգներին, իսկ աշուղներն երգեցին դաշնակցական խմբերի և հերսոնների մարտական փառքը:

Համաշխարհային պատերազմով պայմանաւորեցին թուրքից հայերի մեծ աղջար, երկրի հայութեան մի շարք յուսահասական, այլ հերսոնական ընդլայնուելը և կովկասի հայոց կամաւորական շարժումը: Ի՞նչպէս եղաւ, որ դաշնակցական Վասպուրականի «արկածախնդրական» պատամբութեան միացան Վան քաղաքի ումկավարները, իսկ դաշնակցական կամաւորական «արկածախնդրական» շարժման՝ նաև հնչակեանները:

Ահարկու վիլուգումներից յետոյ՝ 1917-ին տեղի ունեցան «Համառուսական Սահմանադիր Ժողով»ի ընարութիւնները: Ի՞նչպէս եղաւ, որ Անդրկովկասի հայութիւնն իր ձայների 95%՝ 558,400 բւէ, աւեց «արկածախնդիր» Դաշնակցութեան:

Եռյն 1917-ի աշնան՝ բոլշևիկացած Ռուսաստանը լքեց Հայաստանի ճակատը: Դաշնակցութիւնը կազմակերպեց հայութեան ինքնապաշապանութեան «արկածախնդրական» գործը: Ի՞նչպէս եղաւ, որ 1918-ի Մայիս 28-ին հիմք դրեց Հայաստանի Հանրապետութեան:

Զարհուրելի սովորութեամարակից յետոյ, 1919-ին, տեղի ունեցան Հայաստանի պարլամենտի «արկածախնդրական» ընտրութիւնները: Ի՞նչպէս եղաւ, որ Հայաստանի տառապած հայ զանգւածներն իրենց ձայների 97%՝ ը (230,272 քւէ) տվին Դաշնակցութեան: (Հնչակ չկար ու չկայ Հայաստանում, իսկ ժողովրդական - ումկավարները ստացան 481 քւէ):

1920 թւականին ոռուը վերադարձաւ Անդրկովկաս և միացած թուրքին՝ որոշեց չքացնել Միացեալ և Անկախ Հայաստանի ծրագիրը և բաժանել մեր երկիրը: Դաշնակցութիւնը դիմեց հայրենիքի սահմանները պաշտպանելու «արկածախնդրութեան»: Ի՞նչպէս եղաւ, որ հայ զանգւածները խռովքի մատնելով՝ սովոր ելան Ռուսաստանի և Թուրքիոյ դէմ:

Վերջապէս, նոյն 1920 թւականի աշնան ընկաւ կարսը: Նոյեմբերի վերջին Աղեքոսանդրապոլում և Երևանում, միաժամանակ, կնքաւ յիշեցին երկու «արկածախնդրօքէն» ողբարի համաձայնադրեր՝ հայ-թւուրքական և Դաշնակցական-մեծամասական: Պարտւած երկիրը բաժանուեց թուրքիր

և ոռուների միջև ի՞նչպէս եղաւ, որ այդ դէպքերից ընդամենը երկու և կէս ամիս յետոյ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը փոթորկելով Հայաստանի հայութիւնը՝ երկնեց Փետրվար 18-ի համաժողովրդական փառահեղ ապաւատամբութիւն՝ իր ետևից քաշելով նուև ումկավարները, հնչակեանները, սոց. դէմոկրատները, սոց. յեղափոխականները:

1921 թ. գարնան Երևանը՝ կրկին անցաւ ոռուների ձեռքը, իսկ նոյն տարւայ ամրան՝ գաշնակցականները, առանց կուի, խրոխա Զանդեղուրը յանձնեցին բոլշևիկներին՝ սակայն, այս զաւառը կ. Հայաստանին և ոչ թէ Ամրբէջջանին միացնելու «արկածախնդրական» պայմանը: Եւ այդ օրից (գր. թէ 13 տարի) բոլշևիկներն իշխում են Հայաստանում: Ի՞նչպէս եղաւ, որ կազմակերպւած բոլշևիկների թիւը Հայաստանում մէկուկէս անզամ աւելի՝ քիչ է, քան բանտերում և աքսորավլայրերում տառապսղ դաշնակցականների, որ խորհրդային իշխանութեան բոնազբուեալ «հմայքը» գոյութիւն ունի միայն արտասահմանի ցեղուրացների համար, մինչ երկրի զանդանների ոգում իշխում է մի ուժ, որ բոլշևիկների որակում կոչւում է՝ Դաշնակիզմ:

Ի՞նչպէս եղան այս բարբը:

Մաքով սինլքորների համար՝ շատ պարզ եղանակով՝ «արկածախնդրոբէն»:

Մաքով սինլքորը նա չէ, որ միայն ազէտ է, այլ նա՝ որ նա՛և անբարոյ է: Նմանի մեղքը նրանում չէ, որ իր մտածման ձառապայթները կարծ են, այլ նրանում՝ որ նրանք վատասերւած են: Նմանը կոյր չէ, այլ մրասէր. հիւանդ չէ, այլ լսիրչ. յիմար չէ, այլ զբանենք:

Նա հասկանում է, անշուշտ, որ Դաշնակցութեան պէս ահարկու աեմպերամենուով օժաւած մի հոսանք, չէր կարող բռնազբօսիք միջոցներով ամբողջ մի ցեղի կեանքի անիւր շարժել: Նա զիսէ, որ ա՛յնքան փլուզումներ և պատմական զարնուրելի փոթորկումներ ձաշակող Մեծ Հայքի (բուն Հայաստանի) ամբողջ ժողովուրդը, չէր կարող «արկածախնդրութեան» շնորհիւ կապւած մնալ Դաշնակցութեան: Նա այնքան էլ յիմար չէ և կարող է ըմբռնել, որ համազգային մի կազմակերպութիւն, առանց զանդանների ընդհանուր արտազբութեանց հաշւառման՝

չէր կարող յեղափոխական երկարատև գործունէութիւն ունենալ: Նա զիտէ, որ Հայաստանի ժողովուրդը, զրեթէ 98 % պվ, երկրագործների մի զանգւած էր. իսկ ժողովուրդը, մանաւանդ երկրագործ ժողովուրդը, իր էութեամբ ո՛չ թէ «արկածախնդիր» է կամ «արկածասէր», այլ ինչպէս ասում են. «տառ չափող, մէկ՝ կարող»: Նա զիտէ, որ Դաշնակցութեան խարիսխը հէնց այս երկրագործ զանգւածներն էին. նրա հայրուկները՝ նայ զիւղացիները: Նա կարող է եղբակացնել, որ Դաշնակցութիւնը՝ երկրի հայութեան համար հայրենի հողի խորհուրդի, իր սեփական զոյութեան կռահումի, իր ցեղայնութեան, իր կրօնական զգացման սրբասարսում համադրութիւն էր:

Հասկանում է, զիտէ, յիմար չէ, կարող է ըմբռնել, բայց եղբակացնում է. «արկածախնդրութիւն»:

Ալաշկերտի Թոփրադ-Գալէի զպրոցում, Բաղդասար անունով չարաձճի մի տղայ կար: Բաղդասարը ձանաչում էր տառերը, գիտէր բառեր կապել, բայց երբ խընդիրն իր անւան կզար՝ ամբողջ գիտցածները քամուն կը տար:

Մի օր, նորեկ ուսուցիչը հրահանգում է».

— Բաղդասամ'ր, անունդ կապի՞ր.

— Պարո՞ն, «աիւն-այբ-մեն-տամ» — Բաղդասար:

Զարմացած ուսուցիչը ամբողջ կէս ժամ աշխատում է ուղղել Բաղդասարի սխալը, բայց չարաձճին մինչև վերջ ապուշ է ձեւանում և անվերջ կրկնում «աիւն-այբ-մեն-տամ» — Բաղդասար»:

Բաղդասարի մեթոդով են վարւում նաև հակազաշնակցականները: Երանք ծանօթ են պատմութեան «այբու բեն»ին, զիտեն որոշ բառեր կապել, բայց հէնց որ յօանում են հայոց «վեղափոխութեան» — ապուշ են ձեւանում և այդ սրբաձմիկ բառը կապում ու կարդում են «արկածախնդրութիւն»:

Բաղդասարը չարաձճի մի տղայ էր. իսկ ի՞նչ է հակաղանակցականը, լրբացած մի երախս՞յ:

Միջագետից, 1922-ին Հայաստան ներզաղթող վասպուրականի նարեկ զիւղացի պառաւ մի կնոջ հետ խօսելիս՝ կատակով հարցրի.

— Նանի՛, Հայաստան հասնելիս ի՞նչ պիտի անես, բուշի՞կ պիտի դառնաս:

Աներևակայելի ցնցումի մատնւեց պառաւի ողջ էութիւնը. ինչպէս զարհուրանքով աղաղակեց.

— Հաւա՛ր, կալօ՛, ի՞նչ կասես. ընչի՛ (ինչու) և քի՞ւրտ եմ, ընչի՛ ես ամմկավա՞ր եմ:

Մի օր էլ, մեր զիւղացի Ասօին հարցրի, թէ ի՞նչ է նշանակում «հնչակ»:

Խնդոց և պատասխանեց.

— Հնչակ՞կ. վանեցիք և խլաթցիք կըսեն «խնչակ»: մենք կըսենք «պնչակ»: Հնչակ-խնչակ—սատոնի պնչակ:

Նարեկացի պառաւի և մանաւանդ մեր զիւղացի Ասօի այս տպեղ, կոպիտ, այլ պատկերաւոր բնորոշում՝ մեր մեզ կոահել են աւլիս ո՛չ միայն հայ չինականների գաշնակցական ոգու խորքը, այլև մատնանշում նրանց նախազգալու բարձր կարսղութիւնը: Հայաստանի զիւղացիները զգւում էին ուամկավաբներից և հնչակներից, չնայած որ, միայն Վան քաղաքում մի քիչ «ուամկավարներ» կային, իսկ հնչակները մեր աշխարհում լապտէրով էին փնտուում: Բացի այդ հին հնչակեանները ազգասէր մարդիկ են եղել, իսկ Վանայ ուամկավաբները հայրենական զգացումից զուրկ չէին:

Բայց ինչո՞ւ էին զգւում. ինչո՞ւ ատում. արդեօ՛ք, այլ պատճառով, քան այն, որ նախազգում էին, թէ մի օր «հնչակ-ուամկավար» անուններով պիտի խօսիրանշւի հայոց ցեղանենդ չէյթանականութիւնը:

9) Պայտար Միացեալ եւ Անկախ Հայաստանի «երազ»ի դեմ. — Այս աշխարհն այնպէս է, որ նրանում ցերեկ կայ և զիշեր, կեանք կայ և մահ, իրականութիւն կայ և երազ, առաքինութիւն կայ և լրբութիւն, շահերի անհաշտելի հակամարտութիւն կայ և ներզաշնակութիւն, ուրախութիւն կայ և արտմութեան արցունք, խաղաղութիւն կայ և պատերազմ, յաղթութիւն կայ և պարտութիւն:

Ցաղթականները ձգտում են ապահովել «օահած»ի տիրապետումը, պարտուղները՝ սպուտ են իրենց «կորուս»ը, տառապում են, փոթորկում և երազում են կորցրածի վերանւաճումը:

Թրանսացիները 1871-ին պարտում են, կնքում են «ամօթալի» մի գաշնագիր և յետ այնու, զրեթէ կէս դար,

սպում են Ալգաս-Լոբէնի կորուսար, տառապում են, փոթորկում, երազում և մի օր էլ (1918-ին) հասնում են իրենց բաղձանքին:

Հայերը՝ 1917-18-ին ստիպւում են իրենց վրայ վերցնել ոռւուտամկական պատերազմի բնոր. շարունակում են կոիւը թուրքիոյ դէմ. կորցնում են տաճկա-Հայաստանը և կարսը, բայց փրկում են Երևանը: Բաթումում սարազրում են «ամօթալի» մի դաշնագիր, բայց ընդամենը 2 ամիս յետոյ, իրենց խորհրդարանի բացման առիթով՝ յաղթական թուրքին և գերմանացիներին առում են, «Ան Երկրի սահմանները կընդարձակեն կենքի Երկարի ուժով»: Եւ գրանից մի քանի ամիս յետոյ, վերանշւաճում են Կարսը, կանգնում են ամբողջ տաճկա-Հայաստանը վերադրաւելու, Միացեալ եւ Անկախ Հայաստան սաեղծելու կարելիութեան առաջ:

Նոյն հայերը, 1920 թւականին հարկադրում են պատերազմել ոռւութուրքական զինակցութեան դէմ. պարտում են, կրկին կորցնում կարսը և թուրքի առաջխաղացումը դէպի Երևան կասեցնելու, այնաեղ կենարոնացած հայութեան զոյսւթիւնը փրկելու, երկրի մընացորդը նւազագոյն չարիք թւացող բոլշևիկներին յանձնելու համար ժամանակ շահելու դիտաւորութեամբ՝ ըստափում են սարազրել Ալեքսանդրապոլի «ամօթալի» դաշնագիրը, բայց անմիջապէս էլ այդ յայտարարում են — արդիւնք բոնադաւման, այսինքն՝ չեղեալ:

Աւելին: Երկու ևկէս ամիս յետոյ — Փետրւար 18-ին — նոյն հայերն ապսամբում են իրենց «հարաւիրած» բոլշևիկների դէմ՝ շւտով նաև Տաճկաստանը վրէժխնդրելու յոյսով: Բայց հայ - մեծամասնական այս պատերազմն էլ վերջանում է հայերի պարտութեամբ: Թուրքն առ բոլշևիկը ծանր մի տապանաքարով կնքում են Անկախ Հայաստանի իրական ծրագրը, բայց նրա յարութեան յայսն իրը ներքին խոռոչ, շարունակում է ալեկոծել հայերի սիրաը. զրա համար էլ՝ նրանք սպում են, գեգերում, որոնում, տառապում, փոթորկում, երազում:

Այս է բնական կանոնը պատմազրծ «ևս» երի հապեմանութեան:

Աստուծոյ արեկի առակ, սակայն, սողսոկում է խա-

ւարածին մի չետկ, որ ո՛չ աղօթել գիտէ, ո՛չ օրհնել, ո՛չ կուել գիտէ, ո՛չ յաղթել. ո՛չ երկնել գիտէ, ո՛չ առեղծազործել, որով իր «աղգակիցների» պարաւութեան դէպքում, ո՛չ սպում է, ոչ էլ տառապում, ո՛չ զղջում է, ո՛չ էլ տենչում, ո՛չ փոթորկում է, ո՛չ էլ երազում:

Հոգեբանօրէն հակաղաչնակցական հայ տիպն է դա-թշնամու խնդակիցը, չոր փաստերից խօսող «ոէւլիսա» իմաստակը, որ արամաբանում է. «Ճեռքը որ չես կարող կարել — համբուրի՛ և ձակասիդ զի՛ր»:

Սարսափի անասունն է որոնում նրա սպում. այն-տեղ, ուր փոթորկել է պէտք՝ նա կախում է ականջնեւրը և իր էութեան խեղճութեան յօրանջել սալիս, «Մի-ացեալ Հայաստանն արկածախնդրական մի ցեորք է. նա երբե՞ք չի կարող իրականանալ»:

Այդ սինլիքորի համար է, կարծես, ֆառուսաը մէջ-բերում իմաստունի խօսքը, թէ.

«Ողիների աշխարհը չի զացւած,

«Քո զգայնութիւնն է փակ,

«Քո սիրտն է մեռած»:

Մեռած է հակաղաչնակցականի սիրաը, կտրւած են նրա երեակայութեան թեերը և աշխարհի կարելիութեանց գուոը՝ նրան թւում է յաւիտենօրէն փակ: Նա չի հասկանում, որ «Փակ» գուոը բախում են, եթէ չբացւի բանալի են զործածում, եթէ բանալին էլ չօգնի՝ խորտակում են: Նա զգայնանում է մանաւանդ այս «փորտակում են» բառից, տնկում է իր յիմարաւթեան կոտոշները և զառնցում: «Դաշնակցականները չեն կարսզ թուրք-բոլշևիկեան պատնէշը խորտակել, Միացեալ և Անկախ Հայաստանը՝ չի կարող լինելը»: Զառանում է և ա՛յնքան է տղէտ, որ կարծում է, թէ դիմացինը անծանօթ է ա՛յն ճշմարտութեան, թէ «չի՝ կարող խորտակել», «չի՝ կարող լինել» հոգեբանօրէն թարգմանուում է՝ «չեմ ուզում, որ խորտակի», «չեմ ուզում, որ լինի»:

Դաշնակցական — ինչո՞ւ չես ուզում:

Հակաղաչնակցական (ինքն իր մէջ) — Որովհեակ քո իսկ որակումով՝ ինքս ցեղանենք հրէշ եմ. չէյթանի և ցեղիդ թշնամու զործակիցը, քո և ցեղիդ փառքը չնանցուրժութ սրիկան:

Մի չեզո՞ւ — Հապա՛, ի՞նչ պիտի լինի մեր հայկական զործերի վերջը:

Հակադանական (հայ հանրութեան) — Մենք ոչինչ կարող ենք անել, ազգը սպառւած է, ողորմելի խլեակներ ենք, ինքիններիս կորցրել ենք, խաղաղութեան և հանգստի պէտք ունինք:

Ալաշկերտի եռնջալու գիւղում Բաղէ անունով կաղ մի մարդ կար: Ինչ-ինչ պատճառներով, Բաղէն թշնամանում է իր մերձաւորներից մէկին: Մի օր քիւրտերը կրակ են ձգում այս մերձաւորի կալը: Ոտքի է ելնում ողջ գիւղը և ճղնում է հրդեհը կղզիացնելով՝ մարել: Գիւրդացիները, սակայն, զարմանքով նշաբում են, որ Բաղէն օգաւելով ընդհանուր իրարանցումից՝ կրակից զերծ խուրձերը նետում է բացի մէջ, իսկ կրակւածները փախցնելով՝ տանում է դէպի միւս գէզերը: Երանք զարհուրած ձնում են — Բաղէ՛, ի՞նչ ես անում: Բաղէն պտառասխանում է — եղբայրնե՛ր, ես էլ չգիտեմ ի՞նչ եմ անում, սրտիս ցաւից՝ ինքինների կորցրել եմ:

Բաղէի «սրտի ցաւով» է բռնւել հակադաշնական «ազգասէր»ը. նա ճղնում է լրացնել հրձիկ թշնամու զործը, մոխրացնել մեր կալը և արդարանում է. «ինքինների կորցրել եմ»: Քնի աւետարան է կարդում նա. «Աեղ խաղաղութիւն է պետք եւ հանգիս». գիւտէ, որ հայրենազուրկ և թափառական մարդն ո՛չ խաղաղութիւնից կարող է օգաւել, ո՛չ էլ հանգստութիւն վայելել, բայց նունէ քարսպում, որպէսզի իշ գինակից օտար զայլն իսպառ խեղի՛ հայկական հօտը. «բոլենիկը Հայաստանի պահապան ծունեն ե»:

Ա՛յ, սրիկա՛յ, գու էլ մեր պահապան են ես, բայց չէնց որ կուի ծայն ես լուսմ՝ վախից պորտ բնինում է:

Ընկած է արդէն մտքիդ պորտը. սոսկում ես Միացեալ Հայաստանի մեծ երազից, որովհետեւ զգում ես, որ մեծ երազները մեծ զործեր են պահանջում, մեծ զոհողութիւններ:

Մանրազործ ոզուգ քսութիւնն արդարացնելու համար՝ խանդակավուրում ես փաքրիկ իրականութիւններով և զառանցաւմ. «կեցցէ՛ խ. Հայաստանը»:

Լսի՛ր, սինլքո՛ր, կեցցէ՛ Մեծ Հայաստանը, որ չի՛

կարող 28,000 ք. քլ<sup>մ</sup> տարածութեամբ և 900,000 հայ բնակչութեամբ իր գոյութիւնը յարատեել, որ չի՛ կարող Մասիս լերան, Անի քաղաքի, Վանայ լճի, Արածանի գետի, Մշոյ գաշտի թրքացման և իր մէլիսնաւոր որդիների թափառումի և նւաստութեամն մտքին հաշտել, որ չի՛ կարող հայ ցեղի զահիններից մէկի իշխանութիւնը և միւսի «բարի» հարեանութիւնը՝ Արաքսի ափին հանդուրժել:

Չի՛ կարող, լսի՛ր:

Ե) Պոյիար «ոռւսահայ» գործիների Էւ «ոռւսահայ» հուրեան դիմ. — Դաշնակցականութիւնն ու հո կադաշնակցականութիւնն խստորդէն զատորոշւում են նաև նրանով, որ առաջինն ունի համահայատանեան և համահայկական զգացում ու գաղափարաբանութիւն. վերջինը՝ գարշելի տեսակի հաւածածով է: Դաշնակցութեան երազած «Միացեալ և Անկախ Հայաստանը» միայն հողի պահանջ չէ, այլ ազգային ուժերի համադրման, ցեղի ցրւոծ զաւակների համախմբման, հայլութեան բաղական եւ հոգեբանական ամբողջացման տենչանք: Դաշնակցականը Հայաստանը պատկերում է մի եւ բնինանուր — հակադաշնակցականը Հայաստան ասելով հասկանում է՝ մերթ միայն տանկահայատան. մերթ միայն Կիլիկիա, մերթ էլ՝ միայն Երեւան: Դաշնակցականի ըմբռնումով աշխարհի բոլոր հայերը կազմում են միւնոյն ազգութեան նոյնագոյ բեկորները — հակադաշնակցականը սոյն բեկորները համարում է՝ էութեամբ այլազան: Նա ասում է՝ «հայ» և «հայութիւն», ու՝ «ոռւսահայ», «բուրքահայ», «պարսկահայ» և այլն: Նա ձգում է համագրումի, սա իր էութեամբ՝ պառակտիչ է: Դաշնակցականի համար ոռւսահայ-տաճկահայ տարբերութիւնը բաղական-սահմանային է, հակադաշնակցականի ըմբռնումով՝ հոգեբանական-զգացումային:

Հակադաշնակցական են բոլոր նրանք, որոնք ձմլելով սուսի և թուրքի ազդեցութիւնից՝ հօգեբանորէն իրենց զգում են «ոռւսահայ» կամ «թուրքահայ»:

Հոգեբանորէն «ոռւսահայ»ի էութիւնը համակւած է ներքին ինքնառուսզգացութեամբ, հօգեբանորէն «թուրքահայ»ը, իթէ չի ել գիտակցում, գէթ բնազդով կապւած

է բուրքական եռութեան։ Նա մարմնաւոր հայ է, հոգեւոր ոռուս, սա՝ մարմնաւոր հայ է, հոգեւոր բուրք։ Երբ պատմութեան զանգը հնչում է և ցեղն ուզում է իր ճակատագիրը դարբնել — նա դառնում է բոլցելիկ, սա՝ բուրքական լրտես կամ անգիտակցաբար թուրքի հացին կարագ քող քաղաքական խեղկատակ, ներքին խառնակիչ։

Եւ ահա՛ մի անակնկալ։ Մինչեւ երէկ այս ոռուսահայն ու թուրքահայը զիրար առում էին, որովհետեւ ցարական ոռուս և սուլթանական տաճիկը թշնամիներ էին. այսօր զիրար «սիրում» են որովհետեւ բոլցեկիկ ոռուսն ու քեմացական թուրքը զինակցել են։ Այստեղ՝ հոգեբանական, եթէ կուզէք ենթագիտակցական հիմքը, թուրքա«հայ» հակադաշնակցականների և ոռուսա«հայ» բոլցեկիների բարեկամութեան։ Իռուսահայ բոլցեկիկը սիրում է թուրքահայ հակադաշնակցականին, որովհետեւ վերջինս ասում է. «Ես տանկա-Հայաստան չեմ ուզում» (թուրքի ուզածը), թուրքահայ հակադաշնակցականը սիրում է ոռուսահայ բոլցեկի ին, որովհետեւ սա ասում է. «Հայկական դաս այլեւս չկայ, Խորհրդային Հայաստանը մեզ բաւարարում է» (ոռուսի ուզածը)։

Իսկ ի՞նչ է ասում դաշնակցական հայը, կովկասցի դաշնակցականն ասում է. «առա՛նց բուրքաց Հայաստանի—չկայ՝ Հայաստան»։ գաղութաբնակ դաշնակցականը չեշտում է. «առա՛նց կովկասեան Հայաստանի — չկայ՝ Հայաստան»։ ասում են ու չեշտում և միասին ձգտում են «Միացեալ ու Անկախ Հայաստանին»։

Դաշնակցական այս համահայաստանեան և համահայկական մտածումը՝ հակադաշնակցական սինլքորին թւում է «ոռուսահայ» էութեան պտուզ։ Նա պայքարում է այս մտածումը ներկայացնող արեւելահայ ցեղապաշտ գործիների դէմ և քծնում իսկական ոռուսահայերին՝ բոլցեկիկներին։ Պայքարում է, որովհետեւ չի ուզում Միացեալ Հայաստան — քծնում է, որովհետեւ ուզում է Հայաստանը տեսնել բաժանւած, յօշուտած, չքացած։

#### Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒԽՆ

Երբ ամփսիսւմ ասենք.

1) Հակադաշնակցական չէյթանը խլաւրդի պէս զեղբում է թուրքի և ոռուսի բացած ակօսում։ Ասում է մեզ, որովհետեւ մենք թշնամի ենք թուրքին և ոռուսին։

Երբ ցեղի թշնամիների գործակից՝ նա նրանցից ստացել է պայքարի մի տախտակ և յանձնառութիւն՝ մեր կեանքում շփոթ առաջ բերելու, մեզ ինքնամփոփելու և նոր թափով կուի պատրաստելու կարելիութիւնից զրկելու դիտաւորութեամբ։ Նա վէճ է ստեղծել, որպէսզի մեր ուշադրութիւնը ցրի։

2) Այս պայմաններում անհնար է «ազգային միացեալ նակաս» ստեղծել։ Ո՛չ մենք նրանց կզործակցենք, ո՛չ էլ նրանք մեզ իւրաքանչիւրը պիտի զնայ իր ճանապարհով, իսկ զձիուը կատայ պատմութիւնը։ Դաշնակցութիւնը մարմնացնում է հայ ցեղի տերմպերամենար և ազգի քաղաքանորէն զաստիարակւած զանգւածների հաւաքական մատածումը, իսկ պատմութեան մարզում ենթակայական զերակատարներն են — բարձր տեմպերամենը և դասիքակայած զանգւածը։

3) Հակադաշնակցական փոքրամասնութիւնը շերտաւորած է՝ հոգեբանորէն։ Ցեղանենգ չէյթանականութիւնը ներկայացնում է իրը անհատների մի խմբակցութիւն։ Որքան էլ բոլցեկիկ-հնչակ-ոռամկավար-կղերական տարրերը հիմա չէյթանի չւանի տակն են խեղկատակում — չի նշանակում, որ նրանք բոլորը էութեամբ չէյթաններ են։ Կայ մոլորածների, երկչուսների, հարկադրւածների բազմութիւնը։ Այդ բազմութիւնը խօսքի ու գրչի քարոզով չի դաստիարակվի, այլ յեղափոխական կենդանի և լայնածաւալ գործունէութեամբ։ Քաղաքական պրոպագանդի աեսակէտից մէկ ոռումբի ձայնն աւելի՛ է զաստիարակի՛ կիչ, քան մէկ միլիոն քիլոդր մրտաւած թուղթ։

Երբ ոռումբի որոտը լսելի կը զառնայ նաև հակադաշնակցական մոլորածին — նա կհոգեփոխւի. կլծւի յեղափոխութեան կառքին, կթքի իրեն մոլորեցնող ցեղանենգ չէյթանի աչքերի մէջ և կթքի զայրոյթի այնպիսի թուղթով, որ նա կուրանայ։

4) Աշխարհը յղի է նոր կարելիութիւններով. մօտենում է փաթորիկի ժամը։ Այս աշխարհում իշխում է պարբերակների՝ խմորումների և թոհշքների սկզբունքը։ Աստածը յոզնել է, թմրել, կախել է ականջները և յօրանջում է. աշխարհի անիւր իրւել է ցեղսում, ճոքնչում է և դուրս չի գալիս չի գալիս — խաղաղութիւն է։

200

Աստւածը կայտառացել է, հարբել է զինով և երազում է, երգում է և երկնում, երկնում է և ստեղծագործում. աիեզերքն հեծել է իր երիվարը և սանձակուծում է. պատմութիւնը մի վայրկեանում դարերի վաղք է անում, մարդը տենչում է, ձգում, ուզում է յաղթելյաղթահարել, բարձրանալ, բնաշրջումի մի նոր պարբերակ է բացւում, պատղն հասել է ու վայր է ընկնում և քաղաքակրթութիւնը նոր, ճակատագրական մի թռիչք է անում — պատերազմ է:

Հայութեան ճակատագրական թռիչքի ժամն է մօտենում: Պատրա՞ստ: Մոլեգնօրէ՛ն: Տարերայնօրէ՛ն: Մերցեղի թշնամիների դիակները և հայ յեղանենզ չէյթանեների եղկելի հոգիները կոխկրաելով՝ մենք պիտի քայլենք դէպի Միայեալ և Սնկախ Հայաստանի մեծ զաղափարի յաղթանակի արշալոյսը:

(Վ Ե Բ Զ)

ՄԱՅԻՍԻ  
ԱՐԿԱՆ  
ՀԱՅՈՒԹԱՐԱՆ

ՎՐԻՊԱԿ.— 34-րդ էջ, վերէն 15-րդ տող — «օգոստոսի 18-ին» կարդալ՝ օպսասասի 1-ին:  
41-րդ էջ, վարէն 8-րդ տող «1922թ.» կարդալ՝ 1920թ.



## ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՆԱՅԻՐԻ»

ԼՈՅԱ ՏԵՍԱԾ ԵՆ

1.— ՄՏԱԾՈՒՄՆԵՐ — Հ. Ա.

2.— ՑԵՂԱՆԵՆԳ ՇՔՅԹԱՆՀ — Հ. Ա.

---

### **ԳԻՒՆ**

Բուլղարիա՝ 15 լէվ, Ամերիկա՝ 35 սենթ  
Միւս երկիրներ՝ 5 ֆր. գր.